

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

С 1926 г. № 22

Դ. ԱԳՈԼ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С. С. Р.

ՄԱՐԴՈՒ ՅԵԿ ԿԵՆԴՐԱԿԱՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Խմբագրությամբ պրոֆեսոր
Ն. Ս. ՊՈՆՅՈՍՍԿՈՒ



572

(X - 17)

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1926 ՄՈՍԿՎԱ

29 JUL 2010

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

128 572
△
4.17
21290

Ի. ԱԳՈԼ

ՄԱՐՈՒ ՅԵՎ ԿԵՆԴՐԱԿԱՆԵՐԻ
ԾԱԳՈՒՄԸ



Խմբագրությունք պրոֆեսոր
Ն. Ս. ՊՈՆՅԱՍՍԿՈՒ


ՌՈՒՍ. ԹԱՐԳԱ. ՆԻԿ. ՍԱՐԳՍՅԱՆ

(15 նկարով)



Խ. Ա. Զ. Մ. ԺՈՂՈՎՐԴՅԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1926

01. 2019



ԱՐԴ 1

Напечатано в типог. Госиздата
„Красный Пролетарий“
Москва, Пиминовская ул.
д. № 16, в количе-
стве 4.000 экз.
Гла в ли т
№ 64080.



61147-67

1. Ն Ե Ռ Ա Ժ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն

Նախնական մարդը և նրա գաղափարը աշխարհի մասին:—Մարդու և կեն-
դանիների ստեղծագործությանը վերաբերող առասպելի ծագումը—Միջնադա-
րյան յեկեղեցին և մարդու ծագումը—Լինները տալիս ե կենդանիների և բույ-
երի դասակարգությունը:—Լամարկի ուսմունքը մարդու և կենդանիների ծագ-
ման մասին:

Մարդկային գիտությունները զարգացել են աստի-
ճանաբար: Ինչքան հարստացել ե մարդու կյանքի փորձը,
այնքան և լայնացել ու խորացել են նրա գիտություննե-
րը: Նախնական մարդը, վոր չգիտեր գործիքներ պատրաս-
տել, վոչնչով չեր զանազանվում իրեն շրջապատող կեն-
դանական աշխարհից: Գոյության կովում նա գործ եր ածում
նույն զենքերը, ինչ մնացած կենդանիները: Կովի հետևան-
քը կախված եր նրա վազքի ճարպկությունից, մկանների
ամրությունից, տեսողության և լսողության սրությունից:
Մարդու այդ հեռավոր նախորդը ընդունակ չեր առանձին
յերկույթների միջև պատճառական կապ գտնելու, և կյան-
քի հատ ու կենտ փաստերն անցնում եյին նրա կողքով
առանց հարստացնելու նրա փորձը: Նա գեռևս վոչ մի գա-
ղափար չուներ աշխարհի և կյանքի մասին, ինչպես չու-
նեն և այժման կենդանիները: Մարդ այն ժամանակ դեռ
մարդ չեր:

Այդ չորսածեռանի կենդանին մարդ ե դառնում այն
ժամանակվանից, յերբ սկսում ե գործիքներ բանեցնել: Գոր-
ծիքներ բանեցնելու սկզբնավորությունն, ինարկե, չպիտի
պատկերացնել այնպես, վոր իբր թե նախնական մարդը մի
գեղեցիկ որ արթնանալով՝ հնարել ե մուրճ և այն սկսել
գործածել բոռունցքի փոխարին: Տասնյակ հազարավոր տա-

բիներ են անցնել, մինչև վոր մարդ բռունցքի փոխարեն սկսել ե գործածել քար: Նրա առաջին գործիքները յեղել են այն իրերը, վոր պատահմամբ ունեցել ե նա իր ձեռքի տակ: Այդպիսի իրեր յեն յեղել քարերը, ծառի ճյուղերը և այլն: Առաջին գործիքները վոչ այլ ինչ ելին, բայց յեթե նրա բնական գործարաններն արաքուստ ուժեղացնող միջոցներ: Այն փայտը, վորով նա ծառերից պտուղ երթափ տալիս, նույն ձեռքն ե յեղել, միայն ավելի յերկար, քարը, վորով կոտրում եր կաղինը՝ նույն ատամը կամ բռունցքը, միայն ավելի ամուր և դիմացկան: Նախնական մարդը բանեցնում եր փայտն ու քարը անտառում և թե դաշտում դիպվածաբար: Միայն գոյության կովի յերկարատե պրոցեսում գործիքների գործածությունն ամրանում ե հետզհետե, վորովնետե նրանց միջոցով կյանքի ծանր կովին նա ավելի հեշտությամբ եր դիմանում:

Այն ժամանակվա մարդն, ինարկե, շատ քիչ բան եր հասկանում: Նրա գաղափարները համապատասխանում եյին նրա տեխնիկային: Արարչի մասին նա գեռ վոչինչ չեր կարող մտածել, վորովնետե ինքը գեռ չեր կարողանում ստեղծագործել: Աշխարհի և մարդու ծագման մասին ունեցած նրա հասկացողությունները նույնքան պարզ ու միամիտ եյին, ինչքան և նրա ամբողջ կյանքը: Աշխարհն ու կյանքը նրա կարծիքով վոչ թե ստեղծվել են, այլ հանկարծակի դուրս են յեկել այրից այնպես, ինչպես հաճախ հանկարծակի դուրս են գալիս այրից արջը կամ մի վորես այլ գաղան և կամ դուրս են յեկել ձվից, ինչպես դուրս են գալիս ձվից թուչուններն անտառում, վորտեղ նա ապրում եր:

Միլիոնավոր տարիներ են անցնել, մինչև վոր մարդ սովորել ե կրակ ստանալ և կավից ամաններ ծեփել: Ըստ հարձակվել ե նրա աշխարհայացքը: Յեկ աշխարհի ու կենտրոնական թագավորության ծագման մասին նրա հասկա-

ցողությունը փոխվել ե՝ համաձայն իր տեխնիկայի: Աշխարհի ու մարդու մասին ունեցած նրա մտապատկերների մեջ յեկեան ե յեկել արարիչը, աստվածը: Յեկ ինչպես վոր մարդ կավից ամաններ ե ծեփում, այնպես ել ճարտար արարիչը կավից ծեփում ե մարդուն: Հանդես ե գալիս հին կտակարանի առասպելը մարդու ստեղծման մասին: Յեկ կիսավայրենի մարդու այդ խղճալի յերեակայությունը դառնում մի աներկայելի փաստ արդի հասարակության համար, վոր ապրում ե յելեքտրականության, անթել հնուագրի, սավառնակների և այլն դարաշրջանում:

Միջնադարյան աստվածաբանները յերկար ժամանակ զլուխ են կոտրել վճռելու համար այն հարցը, թե արդյոք աստված նեղութերին և այլաղավաններին ել նույն կավից ե ստեղծել, ինչից վոր ստեղծել ե Աղամին, թե՝ դրա համար գործ ե ածել նա այլ տեսակի կավ: Չե վոր նրանց կարծիքով աստված չեր կարող ստրուկներին և տերերին միենույն նյութից ստեղծել: Յեկ սրբազն հայրերը լուծում են այդ հարցը: Աստված իր ստեղծագործության ժամանակ գործ ե ածել տարբեր տեսակի կավեր: ազնիվ տեսակի՝ սպիտակ կավից ստեղծել ե քրիստոնյաներին, իսկ հասարակ, ու կավից՝ նեղութերին ու մահմեղականներին:

Յեկ իրոք. ամերիկական կոլոնիզատորները հնդիկների վերաբերմամբ ցույց տված իրենց քստմնելի արարքներն արդարացնելու համար հայտարարում են, թե հնդիկները Աղամի հաջորդները չեն, թե նրանք հոգի չունեն, զրա համար ել կարելի յե վարվել նրանց հետ այնպես, ինչպես վարվում են անսառունների հետ: Ամբարտավան այդ հարստահարիչները նայում եյին հնդիկների վրա, վորպես կենդանիների վրա և հարկադրում եյին աշխատել նրանց մինչև կատարելապես ուժասպառումն և կոտորում եյին նրանց անզթորեն, վորի պատճառով և ծաղկյալ վիճա-

կում գտնվող այդ ժողովուրդները համեմատարար կարճ ժամանակամիջոցում կատարյալ այլասեռման են յենթարկում։ Կավից ստեղծված Աղամի մասին յեղած անմեղ առասպելն այդպիսով հարստահարիչների ձեռքին դառնում ե մի զորավոր զենք՝ մի ամբողջ մայր ցամաքի բնակչությանը ստրկացնելու և ստորացնելու գործում։

Սակայն կյանքի ծագման մասին մարդ սկսումնետք հետեւ հեշտ գաղափար կազմել։ Տեխնիկայի և արդյունաբերության զարգացումը լայնացնում ե առանձին ժողովուրդների միջև յեղած կապերը։ Հեռավոր ճանապարհորդությունները պահանջում են բնության ավելի մանրազնուին ուսումնասիրություն։ մարդու աշխատանքը գնալով ավելի և ավելի լայնանում ե։ Կապիտալիզմի հաղթական ընթացքը անողոք կերպով խորտակում ե միջնադարյան հին շրջանակները և ուժեղ զարկ ե տալիս բնության ուսումնասիրության գործին։ Տասնեռութերորդ դարի կեսերին բնության կենդանի և անկենդան աշխարհների մասին կուտակվում ե արդեն բավականաշափ նյութ։ Սակայն այդ տեղեկությունները ներքնապես շաղկապված չեյին միմյանց հետ։ Նրանք դեռ անկախ բնույթ եյին կրում։ Հարկավոր եր նրանց կարգի բերել, շաղկապել միմյանց հետ։ Յեվ այդ աշխատանքը իր վրա յե վերցնում շվերացի գիտնական կիննեյը։ Նա սիստեմի յե վերածում բույսերի ու կենդանիների մասին յեղած բոլոր տեղեկությունները, Նա բաժանում ե բոլոր կենդանիներին և բույսերին ըստ նմանության աստիճանի՝ դասերի, կարգերի, ցեղերի և տեսակների։ Նրա դասակարգության համաձայն իրար շատ մոտ կենդանիները և բույսերը կազմում են աեսակներ։ այսպես, որինակ, ձիերը, ընտանի չները, գայլերը, սիսերը, ցորենը և այլն—առանձին առանձին տեսակներ են։ Իրար մոտ տեսակները միանալով միմյանց հետ՝ կազմում են ցեղեր։ Որինակ՝ ընտանի չները, գայլերը, շնագայլերը,

աղվեսները կազմում են շների ցեղը։ Նման ցեղերը կազմում են կարգեր, որինակ, գիշատիչների, կրծողների և այլն կարգերը։ Նման կարգերն ել կազմում են դասեր։ կաթնասուների, թոչունների, ձկների, միջատների և այլն։ Մարդուն Լիննեյը զետեղում ե որանգուտանի, շիմպանզեյի և այլ կապիկների հետ միասին միկնույն կարգի մեջ։ Նա բավական մոտ կապ ե հաստատում այդպիսով վոչ միայն առանձին մարդկային ցեղերի, այլ և մարդու և կապիկների միջև։

Սակայն, Լիննեյը ընդունելով այդ կապը, այնուամենայնիվ գտնում եր, վոր յուրաքանչյուր տեսակ ստեղծվել և առանձին և գոյություն ունի աշխարհի սկզբից սկսած։ Նշանակում ե, լիննեյի կարծիրովնախնական բոլոր տեսակներն անփոփոխ են մնացել մինչև մեր որերը։

Տեսակների անփոփոխականության դեմ ե դուրս գալիս տասնակիններորդ դարի սկզբին ֆրանսիայի գիտնական Լամարկը։ Լիննեյի դասակարգություննից հանում ե նա համապատասխան հետեւթյուններ։ Տեսակների արտաքին ձևերի և ներքին կազմության միջև յեղած նմանությունները բացարձում ե նա վոչ թե պատահականությամբ, այլ այդ տեսակների մեջ յեղած ազգակցական կապերով։ Կենդանական և բուսական այժմյան ձևերն ըստ Լամարկի առաջացել են ավելի պարզ ձևերից՝ փոփոխությունների ու բարդացումների միջոցով։ Արտաքին պայմանների մեջ տեղի ունեցած ամեն մի փոփոխություն առաջ ե բերել կենդանու պահանջների մեջ համապատասխան փոփոխություն։ Պահանջների այդ փոփոխությունը իր հերթին փորոշ փոփոխություն ե մտցրել կենդանու կյանքում։ Նրա գործարանների մեծ մասը սկսել ե ավելի ուժեղ կերպով աշխատել, մյուսները, ընդհակառակը, թույլ։ Խակ հաճախակի գործածությունը ուժեղացնում, ամրացնում, զարգացնում ե գործարանը։ անգործածությունը կամ նվազ

գործածությունը, ընդհակառակը, թուլացնում, նվազեցնում
և վերջապես անհետացնում են նրան։ Կարճ ասած, գործա-
րանները գարգանում են շնորհիվ ուժեղ աշխատանքի և
անհետանում են շնորհիվ անգործության։

Այս բոլորը, ինչ վոր ձեռք են բերում կամ կորց-
նում կենդանիները արտաքին պայմանների ազդեցության
տակ—անցնում ե ժառանգաբար հաջորդներին և ամրա-
նում սերունդների մեջ։ Մարդը ևս մյուս կենդանիների
նման առաջցել ե ավելի պարզ նախորդներից։ Լամարկի
կարծիքով մարդու նախապապը յեղել ե շիմպանզե կապի-
կը, վոր շնորհիվ զանազան պատճառների՝ հարկադրված ե
յեղել թողնել ծառերի վրա մագլցելը և բնակավայր ընտ-
րել դաշտավայրը։ Նրա յետելի վերջավորությունները փո-
խարկվել են վոտքերի, իսկ առջնինները՝ ձեռքերի։ Այդպի-
սով չորսձեռնի կապիկը դարձել ե յերկծեռնի կենդա-
նի, այսինքն մարդ։ Ահա ընդհանուր գծերով լամարկի ուս-
մունքը։ Այդ ուսմունքը ժամանակակիցների կողմից հա-
վանություն չի գտնում, վորովհետև չուներ դեռևս բա-
վարար փաստական հիմնավորումն։ Անցնում ե այսու-
հետեւ հիսուն տարի և աստիճանական զարգացման տեսու-
թյունը (տեսակների ծագումը հետզետե զարգացման ճա-
նապարհով) նորից որակարգի խնդիր ե դառնում։ Մակայն
այժմ նա վոչ միայն քննության ե դրվում, այլ և ստա-
նում ե իր հանճարեղ լուծումը՝ շնորհիվ մեծ բնագետ Զարլզ
Դարվինի։ Դարվինն այդ ուսմունքն այնպիսի հանճարեղ
մշակման ե յենթարկում և այնպես ե հիմնավորում փաս-
տական տվյալներով, վոր ամենակարճ ժամանակամիջո-
ցում նա վոչ միայն գրավում է կենսաբանությունը, այլ
և դառնում ե տիրապետող ու առաջնորդող տեսակետ գի-
տության բոլոր բնագավառներում։ Տամնեիններորդ դարի
յերկրորդ կեսը ամբողջ գիտության մեջ դարվինիզմի դա-
րեցրջան եր։

2. ԱՊԱՅՈՒՅՑՑԵՐ, ՎՈՐՈՆՔ ԽՈՍՈՒՄ ԵՆ ՀՈԳՈՒՏ ԱՍՏԻՃԱ- ՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Ի՞նչ ե ասում սաղմի ծագման և դարդացման վերաբերող գիտությունը
(սաղմաբանությունը)։ Ի՞նչ ե վկայում յերկադնդի վրա հեռավոր անցյալնե-
րում ապրած եյակների բարացած մնացրդների հանածոներին վերաբերող գի-
տությունը՝ հսերանությունը (պալեոնտոլոգիան)։

Ով վոր ուշադրությամբ դիտել ե իրեն շըջապատող
բնութույնը, հավանորեն զարմացած կլինի կենդանական
և բուսական աշխարհների ձևերի բազմազանության, նրանց
կատարելության և շըջապատող պայմանների նկատմամբ
ունեցած հարմարացումների վրա։ Յուրաքանչյուր կեն-
դանի կամ բույս ոժտված ե հատուկ հարմարություններով,
վորոնց միջոցով և պայքարում ե կյանքում իր զոյությու-
նը պահպանելու համար։ Ահա ողում ճախրում ե թիթեռ-
նիկը, նրան հետապնդում ե գիշատիչ թոշունը և թիթեռ-
նիկը թագնվում ե առաջին իսկ պատահած ծաղկի վրա։
Նրան փրկում ե իր թևերի գույնը, վոր նման ե ծաղիկ-
ների գույնին։ Ճյուղի վրա նստած թրթուռն իր ձևով և
և կառուցվածքով այնքան ե նման ճյուղին, վոր միանգա-
մայն աննկատելի յե գառնում նրա վրա։ Յեվ այդ ազա-
տում ե նրան իր թշնամիներից (նկ. 1)։ Կենդանիների
գույնը համապատասխանում ե այն միջավայրին, վորի
մեջ ապրում են նրանք։ Ծառագորտն ունի կանաչ գույն,
բևեռային յերկրներում ապրող կենդանիներն ունեն ձյու-
նի նման սպիտակ գույն, իսկ անապատում ապրող կեն-
դանիները՝ դեղին ավաղային գույն։ Շատ բույսեր «դա-
դում» են իրենց կպչողներին և այդպիսով ազատվում իրենց
շուրջը վիստացող քաղցած կենդանիներից։ Հարմարացումը
կենդանի եյակի համար վոչ միայն զենք ե շըջապատող թըշ-
նամիներից և վտանգներից պաշտանվելու համար, այլ և
միջոց ե՝ անհրաժեշտ կերակուրը հայթայթելու համար։
Միջատակեր բույսերն ունեն հատուկ գործարաններ, վո-

բոնց միջոցով բոնում են իրենց վրա նստած միջատներին:

Ի՞նչպես ե առաջացել այդ կատարելությունն ու հարմարացումը: Տգետ գյուղական պառավ կինը կասե անշուշտ, վոր այդ բոլորը աստված ե ստեղծել նա գուցե ասե նաև, թե վոր որն ե ստեղծել աստված, վորովհետև հին կտակարանի մեջ ցույց ե տրված, թե կենդանի եյակների ստեղծագործությունը վոր որերին ե տեղի ունեցել: Սակայն այդ անդրշընեղինեղյան հեքիաթները չեն կարող, իհարկե, բավարարել այժմյան մարդուն: Այժմյան մարդը չի հավատում հրաշքներին: Հավատը ապացուցում է միայն մարդկային մտքի անկարողությունը, վոր հարկադրված՝ հրաշքի ոգնությունն ե դիմում անտեղ, վորտեղ չի կարողանում գտնել յերեւույթների խսկական պատճառները: Այժմյան մարդը ցանկանում է ըմբռնել բնության յերեւույթները. նա համառ կերպով ուսումնասիրում ե այդ յերեւույթները և գտնում նրանց մեջ յեղած փոխադարձ կապերը: Բնության յերեւույթների ըմբռումը բացասումն ե ամեն տեսակի հրաշքի:

Նկ. 1. Թիթեռի թըրթու, վոր ապրում ե խոտաբույսերի վրա նա մարմնի ձեռվ և գույնով նման ե փոքրիկ հառկի:

Թիթեռի թըրթու միանգամայն հակասում են հին կտակարանային հասկացողություններին, վորոնց համաձայն աշխարհը առաջացել աստծու հրամանով վոչչից և շարունակ անփոփոխ դրության մեջ: Աշխարհը մինչև իր այժմյան ձեռ ընդունելը կրել ե մի շարք խարհը մինչև իր այժմյան ձեռ ընդունելը կրել ե մի շարք խոշոր փոփոխություններ: Այժմյան կենդանիների շատ խոշոր փոփոխություններ են համեմատաբար ավելի պար-



ձեռքից բնական զարգացման ճանապարհով՝ համաձայն վորոշ որենքների, առանց «աստծու» կամ «արարչի» անձնական վորեւ միջամտության: Յեվ այդ ապացուցվում է բազմաթիվ փաստերով ու դիտողություններով: Ամենից առաջ տարբեր եյակների ձեռքի մեջ նկատելի յե մի ինչ վոր ազգակցական կապ առավել կամ պակաս չափով: Զանազան կենդանիների և բույսերի համապատասխան գործարանների կազմությունը ուսումնասիրելու ժամանակ գտնում ենք նրանց մեջ զարմանալի նմանություն: Այդպես են, որինակ, մարդու ձեռքը, ձիու վոտքը, արջի թաթը և թոշումի թերը: Այս բոլոր գործարաններն ունեն միենանույն տիպի կազմություն, բաղկացած են միենանույն վուկրներից և միացած միմյանց հետ միանման ձեռքի: Այս նմանությունը ցույց է տալիս, վոր այդ գործարաններն առաջացել են միենանույն արմատից, բայց յենթարկվել են խոշոր փոփոխություններից և բարդացումներից:

Կենդանի եյակների ծագման մասին մարդ հեշտ գաղափար ձեռք ե բերել միայն ժամանակի ընթացքում: Տասնեիններորդ դարի սկզբում կենդանիների և բույսերի վրա կատարված դիտողություններից հավաքվել եր բավական հարուստ նյութ, յերեան եյին յեկել գիտության ամբողջ բնագավառներ, վորոնք առաջները բոլորնին գոյություն չունեյին և վորոնք վճռողական ազդեցություն ունեցան կենդանի եյակների կազմության և զարգացման, նույնպես և ժամանակի ընթացքում նրանց կրած ձեռքիսությունների մասին մեր ունեցած հասկացողությունների վրա:

Այդ գիտություններից մեկը հանդիսանում է կենդանական և բուսական սաղմերի զարգացման մասին յեղած գիտությունը՝ սաղմնաբանությունը: Հաստատվել ե, վոր հասուն վիճակում միմյանցից խիստ կերպով տարբերվող կենդանիներն իրենց սաղմային վիճակում չափազանց նման են միմյանց: Բոլոր սաղմերն առաջանում են միանման


ձեռվ. Նրանք բոլորն ել սկզբում վոչ այլ ինչ են լինում, բայց յեթե մի հատիկ բջիջ, վոր այնուհետև հետզետե բաժանվելով՝ առաջ ե բերում նոր բջիջներ։ Միայն հետագայում, ծնվելու մոտերքը տարբեր կենդանիներ սկսում են ստանալ իրենց առանձնահատուկ ձև ու կազմությունը։ Զատկենդանիների սաղմեր իրենց կյանքի առաջին ամիսներին այնքան նման են լինում միմյանց, վոր դժվար ե տարբերել նրանց միմյանցից։ Մարդս իր սաղմային վիճակում ունենում ե ձկան նման քիմոլիմատներ, պոչավոր կենդանու նման պոչ, ծածկված ե լինում մնացած կաթնասունների նման աղվամաղով և մարմնի մասերն ել առաջանում են ձիշտայնպես, ինչ-

նկ. 2. Սաղմեր.—Կառպի (D₁, D₂, D₃), պոչավոր կառպի (E₁, E₂, E₃) և մարդու (F₁, F₂, F₃)。

պես մյուս կենդանիներինը (նկ. 2)։

Թե ինչպիսի կարևոր դեր են կատարում քիմոլիմատները

թոքերով շնչող մի քանի կենդանիների համար, ցույց ե տալիս գորտի զարգացումը։ Գորտն իր ամբողջ մանկությունը շերեփուկի ձեռվ անց ե կացնում ջրում, շնչում ե այնտեղ քիմոլիմատներով և ավելի շատ ձկան ե նմանում, քան գորտի։ Բայց ի՞նչու գորտի ձվից անմիջապես փոքրիկ գորտ չի առաջանում՝ առանց քիմոլիմատների և պոչի ի՞նչ ե ասում մեզ շերեփուկից այդ ձեռվ գորտի զարգացումը։ Դա պարզապես ցույց ե տալիս, վոր գորտն իր զարգացմամբ իր հին ձկանման հաջորդից ավելի առաջ ե անցնում։ Շերեփուկից գորտի փոխվելը ցույց ե տալիս, թե



նկ. 3. Ցափակաձուկը Ցերկու աչքերը տեղափորված են մի կողմի վրա (ձախ)։

ինչպես ե առաջացել համեմատարար ավելի ցածր կենդանուց մի նոր կենդանական տեսակ։

Ինչպես հայտնի յէ, տափակաձուկը չի լողում, այլ պառկում ե ջրի հատակին աջ կողի վրա և այդպես դարձնամուտ լինում իր վորսին։ Ցարունակ այդպես պառկած մնալու հետևանքով նրա մարմինը տափակել է։ Բացի դրանից, գունավորում ե ստացել նրա մարմնի միայն վերևի յերեսը, իսկ հատակին դարձած յերեսը բոլորովին սպիտակել է։ Ցափակաձկան յերկու աչքերը դարձած են դեպի վեր, այսինքն գտնվում են մարմնի միայն մի կողմում, ձախ կողմում (նկ. 3)։

Սա մի բացառիկ յերևույթ է, մնացած բոլոր ձեների աշքերը գտնվում են յերկու կողմերի վրա։ Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, վոր ձկից նոր դուրս յեկած մատաղ տափածուկն ունի նույն կազմությունը, ինչ վոր մնացած ձկները։ Նրա աչքերը գտնվում են յերկու կողմերի վրա և ինքն ել լողում ե փորը դեպի ցածր, մեջքը վերև։ Իսկ յերբ փոքր ինչ մեծանում է, սկսում ե վարել այնպիսի կյանք, ինչպես իր ծնողները. պառկում ե ջրի հատակին իր աջ կողի վրա և այդպես դարանամուտ լինում փորսերին։ Յեզ ահա այդ ժամանակ նրա աջ աչքը յենթարկվում է խոշոր փոփոխությունների։ Նա սկսում է հետզհետե ճակատի վրայով տեղափոխվել մարմնի ձախ կողմը, վորի հետևանքով և ստացվում ե նրա աղավաղված պատկերը։ Յեթե իրոք, արարին ե ստեղծել տափակածուկը ստեղծգործության առաջին որերին իր այժմյան ձևով, ապա այդ դեպքում, միանգամայն անբացատրելի յե դառնում, թե ինչու այդ ձուկն իր մանկության հասակում իր կազմությամբ նմանում ե բոլոր մյուս ձկներին և զուրկ ե, ընդհակառակը, հենց այն հատկությունից, վոր ամենից բնորոշն ե նրա ծնողների համար։ Բայց դրա բացատրությունը պարզ է։ Տափակածկները շարունակ այդ նույն կազմությունը չեն ունեցել։ Նրանք առաջացել են այնպիսի նախորդներից, վորոնց աչքերը տեղափոխված են յեղել, համաշափ կերպով, մարմնի յերկու կողմերի վրա, իսկ հետագայում, յերբ փոխվել են նրանց կյանքի պայմանները, փոփոխության ե յենթարկվել և նրանց մարմնի կազմությունը։ Յեզ ահա մատաղ տափակածկներն իրենց զարգացման ընթացքում կրկնում են իրենց նախօրդների կրած այդ փոփոխությունները։

Մարդկային սաղմի վրա գտնված քիմուխտներն ու պոչը ևս ցույց են տալիս, վոր մարդու ամենահեռավոր նախորդները յեղել են քիմուխտավոր և պոչավոր կենդանի-

ներ։ Մարդը նաև առաջացել է այն կենդանիներից, վոր առաջացել են նաև մյուս բոլոր կենդանիները։ Նշանակում ե, մարդս ազգակցական կապերով կապված է կենդանական աշխարհի հետ։

Մյուս գիտությունը, վոր հանդես է յեկել տասներեսրդ դարի սկզբին, դա հնեաբանությունն ե (պալեոնտոլոգիա), մի գիտություն, վոր ուսումնասիրում ե յերկրի վրա հեռավոր անցյալներում ապրած կենդանիների քարածո մնացորդները։ Այդ մնացորդների վրա յերկար ժամանակ վոչ մի ուշադրություն չեյին դարձնում և համարում եյին «բնության խաղեր»։ Յեկեղեցին հաճախ ոգտագործում եր նրանց հոգուտ իր շահերի։ Նա այդ քարածոները հայտարարում եր սուրբ մարտիրոսների մնացորդներ՝ իսկ յեթե նրանք այնքան անձոռնի եյին, վոր անհարմար եր նրանց սրբերի մնացորդներ համարել, ապա հայտարարում եր հրեշավոր վիշապների կամ մեղավորների մնացորդներ։ Այսպես, որինակ, մինչև վեցին ժամանակներս Սպանիայում, Վալենսիայի յեկեղեցիներից մեկում մամոնտի մի ատամ ցույց եյին տալիս վորպես սուրբ Քրիստովորի ատամ։ Այս ատամը մարդու բռունցքից մեծ եր։ Միջին դարերում քարածոները համարում եյին մեղավորների մնացորդներ, վորոնք կորել են առասպելական ջըրնեղեղի ժամանակ։ Դրանով յեկեղեցին ուղում եր հաստատել հին կոտակարանում հիշատակված ջրհեղեղյան առասպելը։ Սակայն գիտական հետազոտությունները ցույց տվեցին, վոր հին կոտակարանի այդ ավանդությունն այնքան ե համապատասխանում ճշմարտության, ինչքան մամոնտի ատամը սուրբ Քրիստովորի ատամին։

Բայց ինչպես են ընկել կենդանիների այդ մնացորդները հողային շերտերի մեջ և ի՞նչ են ապացուցում նրանք։

Հայտնի յեւ, վոր յերկրի կեղեւ բաղկացած և առանձին առանձին շերտերից, վորոնք դարսվել են մեկը մյուսի վրա՝ տասնյակ ու հարյուր միլլիանավոր տարիների ընթացքում։ Այդ շերտերն ինչքան մոտ են գտնվում յերկրի մակերևույթին, այնքան ավելի ուշ են առաջացել և այնքան ավելի մոտ են մեր ժամանակներին։ Ամենից առաջնրանց մեջ գտնում ենք ծովերում ապրող կենդանիների մնացորդներ։ Այդ կենդանիները մեռնելուց հետո նստել են ծովի հատակին և հետզհետե ծածկվել զանազան նստածո շերտերով։ Նրանց փափուկ մասերն արագ կերպով նեխման, քայլայման են յենթարկվել, իսկ ամուր մասերը ծծել են իրենց մեջ զանազան հանքային նյութեր և աստիճանաբար քարացել։ Յերկրի կեղեւի զանազան շերտերում գտնված քարածոների ուսումնասիրույթյունը ցույց է տալիս, վոր կենդանիներն ու բույսերը յերկրի վրա վոչ թե միաժամանակ են առաջացել, այլ հետզհետե, իրար յետելից։ Ակզբում առաջացել են պարզ եյակներ, իսկ հետո ավելի բարդերը։ Յերկրի զանազան շերտերում գտնվել են տարբեր տեսակի քարածոներ։ Մակերևույթի մոտ ընկած շերտերում գտնվել են կենդանիների և բույսերի քարածոներ, վորոնք այժմյան կենդանիներից ու բույսերից շատ քիչ են տարբերվում։ Ավելի խոր ընկած շերտերում գտնվել են քարածոներ, վերոնք թեպետ և հիշեցնում են այժմյան ձևերը, բայց վաղուց արդեն կորել, անհետացել են յերկրի վրայից։ Ել ավելի խորը շերտերում գտնվում են քարածոներ, վորոնք նման չեն բոլորովին այժմյան եյակներին։ Այդ խորը շերտերում մենք բնավ չենք հանդիպում բարձր կարգի կենդանիների, այն տեղ գտնում ենք միայն փափկամարմինների, հողվածավոր ձևերի և այլ սրանց նման կենդանիների մնացորդներ, ուրիշ վոչինչ։


Գիտական այս նոր տվյալները մեզ բերում են այն յեղակացության, վոր մեր յերկրի կեղեւի փոփոխությունը և յուրաքանչյուր վերջավորության վրա ունի հենդական

ների հետ միասին տեղի յեւ ունեցել և մի այլ գործողություն, այն եւ հետզհետե փոփոխվել և զարգացել են կենդանիներն ու բույսերը։ Յեթե մեր այժմյան կենդանի եյակները ստեղծված լինելին այնպես, ինչպես այդ նկարագրում ե ին կոտակարանի առասպելը, ապա յերկրի բոլոր շերտերում պետք է գտնվելին միանման կենդանիներ և բույսեր, մինչդեռ իրականությունը, ինչպես տեսանք, բոլորովին այլ պատկեր և պարզում մեր առաջ։


Բայց ի՞նչպիսի ընթացք է ունեցել կենդանիների զարգացումը. և ի՞նչ կարող է ասել մեզ այդ մասին հնեաբանությունը։

Յեթե աշխարհիս վրա են գլխից մինչեւ հիմա գոյություն ունեցած բոլոր տեսակներից հսարավոր լինել գտնել թեկուղ մի մի որինակ, այն ժամանակ դասավորելով նրանց բոլորին ըստ իրենց տարիքի իրար կողք-կողքի, կարող ելինք տալ կենդանական և բուսական աշխարհների զարգացման պարզ պատկերը։ Բայց դժբախտաբար այդ անել մենք առայժմ չենք կարող և հազիվ թե ապագայում ևս ի վիճակի լինենք անելու։ Յեվ պատճառը հասկանալի յեւ միանգամայն։ Հողի մեջ պահպանվում են կենդանիների վոչ բոլոր մասերը, այլ դրանցից միայն մի քանիսը, այն ևս շատ հազվագյուտ գեպքերում վորոշ նպաստավոր պայմաններում։ Կենդանիների մեծ մասը դեռ չքարցած՝ նեխվում, քայլայվում են և կորչում առանց վորոշ հետք թողնելու։ Մակայն այն սակավաթիվ մնացորդները, վոր գտնում ենք այժմ յերկրի զանազան շերտերում, կարելի յեւ բավարար համարել այժմյան կենդանիների և բույսերի մասին պարզ գաղափար կազմելու համար։

Այդ տեսակետից հրաշալի որինակ են տալիս մեզ այժմյան ձիու հանածո նախորդների քարցած մնացորդները։ Ինչպես հայտնի յեւ, բարձր կարգի կենդանիների մեծ մասը յուրաքանչյուր վերջավորության վրա ունի հենդական



մատ, մինչեռ ձիու վերջավորություններից ամեն մեկի վրա կազմիայն մի մատ, վոր յեղունգի փոխարեն ծածկված ե սմբակով։ Այդ մատը համապատասխանում է մյուս կենդանիների յերրորդ մատին։ յերրորդ և չորրորդ մատներից ձիու վերջավորությունների վրա մնացել են միայն փոքրիկ վոսկրիկներ, իսկ առաջին և հինգերրորդ մատներն անհետացել են բոլորովին։ Գտնված քարածոները պարզ կերպով ցույց են տալիս ձիու հաջորդական զարգացման ամբողջ ընթացքը մի տեսակից դեպի մյուսը։ Բանից դուրս ե դալիս, վոր ձիերն առաջացել են փոքրիկ, հորթի մեծությամբ և հինգմատանի վերջավորություններ ունեցող կենդանիներից։ Յեկ ինչքան շերտը մոտ ե յերկրի մակերեսույթին, այնքան նրա մեջ գտնված ձիու նախորդի քարածոներն ավելի յեն նմանում այժմյան ձիերին։ Հինգմատանի կենդանիները փոխարկվում են հետզհետե նախչորսմատանի, ապա յերեք մատանի կենդանիների և վերջապես այժմյան ձիերին։ Նկար 4-ը պարզ կերպով ցույց է տալիս այդ ամբողջ ընթացքը։




Նկ. 4. Ձիու նախորդների վերջավորությունների զարգացումը՝ I, II, III, IV, V—ցույց են տալիս համապատասխան մատները.

Թե առանձին տեսակներ ինչպիսի սերտ կերպով են կապված յեղել միմյանց հետ, ցույց են տալիս զանազան կենդանիների անցողիկ ձևերի քարածոները։ Այսպես, որի նակ, հնագույն շերտերից մեկի մեջ գտնվել ե մի կենդանու մնացորդներ, վոր հանդիսացել ե մողեսից դեպի դանու մնացորդներ, վոր հանդիսացել ե մողեսից դեպի թուչունը տանող անցողիկ ձևը։ Այդ կենդանին թուչուն մո-

ղեսն ե կամ արխեոպտերիքը. ոա իր գլխի, մարմնի և պոչի ձևով նման ե յեղել մողեսին, բայց ծածկված ե յեղել փետուրներով և ունեցել ե թոչունի նման թևեր։ Այդ կենդանին ցույց ե տալիս, վոր թռչնային թագավորության արմատները պետք ե վորոնել մողեսների խմբի մեջ. նա վկայում ե, վոր այդ կենդանիներն ունեն ընդհանուր ծագում։ Ճիշտ այդպես գտնված են նաև սողուններից դեպի կաթնասուները տանող անցողիկ ձևերը։

Ներկայում ևս կան կենդանիների մի քանի տեսակներ, վորոնք միացնում են իրենց մեջ տարբեր խմբերի հատկություններ։ Այդ անցողիկ ձևերը վոչ այլ ինչ են, բայց յեթե տարբեր կենդանական խմբերը միմյանց հետ միացնող ողակներ։ Այդպես են, որինտկ, յեխիզնան և բաղակտուցը, վոր ապրում են այժմ Ավստրալիայում։ Այդ թռչուն-գազանները թռչունների նման ձու յեն ածում և ձվերից դուրս յեկած ձագերին կերակրում են կաթով՝ կաթնասուների նման (Նկ. 5)։



Նկ. 5. Բաղակտուց.

Այս բոլոր տվյալները հերքում են հին կտակարանի առարտելը, վորի համաձայն կենդանիներն ու բույսերը գոյություն ունեն աշխարհի սկզբից։ Նրանք ցույց են տալիս, վոր եյակները փոփոխվում են և վոր մի ժամանակ յերկրիս վրա ապրող կենդանական ու բուսական տեսակները հետզհետե կորել, անհետացել են՝ զիջելով իրենց տեղը նոր ձևերին։ Այս նոր ձևերն առաջացել են հներից ժառանգաբար՝ հաջորդների մեջ փոփանցող փոփոխությունների միջոցով։



Յ . Ը Ն Տ Ր ՈՒԹՅՈՒՆ .

Ընտրության արհեստական և բնական պայմանները: — Գոյության կոիզը:

Դարվինի ուսմունքի գլխավոր առանցքը համդիսանում է տեսակների փոփոխությունը. այժմյան կենդանիներն ու բույսերը յերևան են յեկել վոչ թե միանգամից, այլ անցել են զարգացման յերկայնաձիգ մի ուղի՝ պարզ ձևերից դեպի հետզհետե ավելի և ավելի բարդերը: Բայց ինչպես են առաջացել նոր տեսակները: Ի՞նչու նրանց մի մասը կորել, անհետացել ե, իսկ մյուսները պահպանել են իրենց գոյությունը:


Այս հարցերին պատասխանելու համար Դարվինը տասնյակ տարիների ընթացքում ուշի ուղղվ ուսումնասիրել և ընտանի կենդանիներին և մշակովի բույսերին: Այս ընտանի կենդանիների ու մշակովի բույսերի տեսակները զգալի կերպով տարբերմում են վայրի կյանքով ապրողներից: Այսպես, որինակ, մարդուն հաջողվել ե առաջ բերել շների ամենաբազմազան տեսակներ՝ սկսած փոքրիկ բոլոնյան շնիկից մինչև խոշոր գոզը, վորոնց և հարմարեցրել ե զանազան աշխատանքների. մեկին հարմարացրել ե նա վորսորդության, մյուսին՝ հոտը պահպանելուն, յերրորդին՝ սայլակները քաշելուն ևայլն (նկ. 6): Ըների այդ զանազան տեսակներն առաջացել են անպայման զանազան վայրի նախորդներից:

Ճիշտ այդպես հաջողվել ե մարդուն առաջ բերել և հավերի, բաղերի, խողերի, ձիերի, յեղջուրավոր անսասուների և մանավանդ աղավնիների զանազան տեսակներ:



Նկ. 6. Վերևում, ձախ կողմում — արեսմինական գոյլ՝ սլաղունչ՝ կորուրդական և առաջին կորուրդական գոյլ՝ դոգեսկ, անձ-ընդհանուր յերշանկանի նախադասական վերաբերյալ, բույսերը առ կողմեր՝ բույսերը, ձախ կողմում՝ սովորական գոյլ՝ դոգեսկ, անձ-ընդհանուր յերշանկանի նախադասական վերաբերյալ, տաքառը.

Աղավնիների գանազան ցեղերն այնքան են զանազանվում մեկը մյուսից, վոր մարդ դժվարանում ենրանց մեջ վորեւ աղգակցություն գտնել, բայց չնայած դրան, նրանք բոլորն ել առաջացել են միայն մի վայրի տեսակից՝ ժայռաղջուց (նկ. 7): Միմյանցից այդքան խոշոր չափե-



Նկ. 7. Սովորական ընտանի աղաղջու (1), անզլիական փոստատար աղաղջու (2), յեղիպտական կապուցին աղաղջու (3), յակորինյան աղաղջու (4), սիրամարգանման աղաղջու (5).


ըով տարբերվող աղաղջիների այդ ցեղերը մարդ առաջ երերել շնորհիվ արհեստական ընտրության, Մի շարք սերունդների ընթացքում նա արհեստականորեն ընտրել ե այնպիսի աղաղջիներ, վորոնք իր ցանկություններին ամենից շատ են կարողացել բավարարել, այդպիսիներին պահել ե նա առանձին և բազմացըրել: Իր ընտրությունները մարդ այնուհետև շարունակել ե նաև ձագերի նկատմամբ և այսպիսով վերջիվերջո կարողացել ե իրեն համար ցանկալի առանձնահատկություններն ուժեղացնել և ամրացնել հետագա սերունդների մեջ: Ճիշտ այդպիս ե առաջ բերել

մարդ և վոչխարների ու խոզերի զանազան ցեղերը: Լավ որինակ կարող ե լինել այդ տեսակետից անկոնական վոչխարների առաջացումը: Անցյալ դարի սկզբում Հյուսիսային Ամերիկայում վոչխարների մի փոքրիկ հոտի մեջ, վոր բաղկացած ե յեղել մի խոյից և 12 հատ մաքիներից, բոլորն ել ամեն տեսակետից միանգամայն նորմալ վիճակում, առաջացել ե արական սեռի մի գառ՝ յերկար մեջքով և ծուռը վոտներով: այդ հատկություններով նա հիշեցնում եր տաքս շունը, վորովհետև սա ևս ունի յերկար մեջք և ծուռը վոտներ: Ահա այդ տաքսանման վոչխարից և սովորական մաքիներից ծնվել են գառներ՝ նման կամ հորը և կամ մորը: Այսուհետև բազմաթիվ սերունդների ընթացքում համապատասխան ընտրություն կատարելով՝ հաջողվել ե առաջ բերել յերկար մեջքով և ծուռը վոտներով վոչխարների մի ցեղ: Ճիշտ այդպիս են առաջ բերել և այսպիս կոչվող մոշամական վոչխարները, վորոնք աչքի յեն ընկնում իրենց մետաքսանման փայլ ունեցող յերկար ալիքավոր բրդով: Նույն ձեռվ են առաջ բերել և յեղջուրագորկ սալիտակ վոչխարները:

Հիշենք նաև, վոր Ռուսաստանում զանազան ժամանակներում յերևացել են միասմբակ խոզեր (նկ. 8): Այդ խոզերը մի վորոշ ժամանակ արհեստական կերպով ընտրել և բազմացըրել են, մանավանդ այն ժամանակները, յերբ դեռ յերկաթուղիներ չկային և խոզերին ստիպված եյին վոտքով քշել այս ու այն կողմը: Յեվ այդ միանգամայն հասկանալի պատճառով, միասմբակ խոզերը հեռավոր ճանապարհները շատ ավելի հեշտությամբ եյին անցնում, քան յերկամբակավորները: Հետագայում, սակայն, թողել են այդպիսի խոզեր բազմացնել: Այդ ձեռվ են առաջ բերել և բույսերի զանազան տեսակները: Այդեպահ կամ բանջարանոցատերը ընտրել ե շարունակ ցանկալի հատկություններով ոժտված բույսերին, զուգավորել

նրանց առանձին և այդպիսով առաջ բերել համապատասխան ցեղեր:

Այդպիսի գիտողություններից Դարվինը յեկել է այն յեզրակացության, վոր ընտանի կենդանիները և մշակովի բույսերը առաջացել են վայրի ձևերից՝ փոփոխությունների և մարդկային զանազան պահանջներին հարմարվելու միջոցով։ Մարդ ընտրել է շարունակ այն կենդանիներին և բույսերին, վորոնք ոժտված են յեղել իրեն համար ոգտակար առանձնահատկություններով և պահելով նրանց՝ բազմացրել ե առանձին, իսկ անողոտակար կենդանիներին և բույսերին կամ վոչչացրել ե և կամ թողել ե իրենց բախտի բերմունքին, վորի շնորհիվ և նրանք անհետացել են։



Նկ. 8. Սովորակոն խոզի (ձախ կողմում) և միամբակ խոզի (աջ կողմում) գոտքերի կմախքները.

Նման ընտրություն, Դարվինի կարծիքով, տեղի յե ունեցել և բնության մեջ։ Ամեն մի կենդանի կամ բույս, ըստ Դարվինի, այնքան շատ ձագեր, ձգեր կամ սերմեր ե առաջ բերում, վոր յեթե նրա սերունդը ամբողջովին կարողանար հասունության համեմել, ապա նա կլցներ բոլոր ցասաքներն ու ծովերը և կղրկեր մյուս եյակներին զարգանալու հնարավորությունից։ Բավական ե միայն ասել, վոր թառափը (ոսետր) ամեն տարի ածում ե մինչև յերկու միլիոն ձու և ապրում ե մոտ 50 տարի։ Այդ ձգերից ամեն մեկը ձուկ դառնալուց հետո, իր հերթին կարող ե առաջ բերել դարձյալ մինչև յերկու միլիոն ձու, վորոնցից կըրկին պիտի դուրս գան նոր թառափներ։ Յեվ յեթե բոլոր ձգերից թառափներ առաջանային, այն ժամանակ մի քանի տարում ովկիանոսները բերնի բերան կլցվելին թա-

ռավիներով, այդ պատճառով և մնացած կենդանիներն այնտեղ տեղ չելին գտնի աճելու։ Ամենքին հայտնի խտուտիկ բույսը տասը տարում այնքան շատ հաջորդներ կունենար, վոր աշխարհիս վրա յեղած ցամաքները չելին կարող նրանց բոլորին տեղափորել իրենց վրա։ Զկա առնասարակ վորևե բույս կամ կենդանի, վորի ցեղը, վոչչացումից պաշտպանվելու դեպքում, ամենակարճ ժամանակում չկարողանար լցնել յերկրիս վրա յեղած ամբողջ տարածությունը։ Բայց, իհարկե, այդ յերբեք տեղի չի ունենում, վորովհետև աճման ընթացքում թե կենդանիները և թե բույսերը հանդիպում են բազմաթիվ խոչընդուների։ Յեվ ահա շնորհիվ այդ խոչընդուների, միլիոնավոր ձգերից մնում և ձկներ են դառնում միայն շատ քչերը, մնացածները բոլորը վոչչանում են։ Ըստ ձգեր, սերմեր, սաղմեր, մատաղ և հասունուցած բույսեր վոչչացնում են գիշատիչները, մյուսները չեն կարողանում իրենց համար սնունդ գտնել և մեռնում են սովից, յերրորդները զոհ են գնում զանազան հիվանդությունների։ Մի խոսքով, յուրաքանչյուր քայլափոխում կենդանի եյակները հանդիպում են վորևե մահաբեր վտանգի։ Բազմանալով հսկայական արագությամբ և չգտնելով յերկրիս վրա բավարար քամակությամբ տեղ ու սնունդ՝ ամեն մի կենդանի կամ բույս ստիպված պայքար ե մղում իր թշնամիների ու մրցակիցների հետ։ Յուրաքանչյուր թիզ հող և սննդանյութի ամեն մի փոքրիկ մասնիկ ձեռք ե բերվում սոսկալի կռվով։ Այդ կռիվը կոչվում է գոյության կռիվ։ Այս կռիվը հաղթանակով դուրս են գալիս միայն այն եյակները, վորոնք մյուսներից ավելի լավ են շինված և ավելի լավ են հարմարված իրենց բնակավայրի և կանքի պայմաններին։ Անբարեհաջող պայմաններին դիմադրելու տեսակետից անընդունակները և թույլերը անխուսափելի կերպով մեռնում են, Յենթադրենք, որինակ,

վորեւ յերկը կլիման ավելի չորային ե դառնում: Պարզ ե, այդ դեպքում պահպանում են իրենց գոյությունը միայն նրանք, վորոնք կարողանում են բավականանալ քիչ ջրով, իսկ մյուսները հյուծվում, մեռնում են:

Այդ կովի մեջ զանազան կենդանի եյակների շահերը թե ինչպիսի տարրինակ ձեռվ են բախվում իրար հետ, ցույց ե տալիս հետեւյալ որինակը: Դաշտային մկներին ուտում են կատուները: Նշանակում ե, ինչքան վորեւ վայրում կատուներ շատ լինին, այնքան ավելի քիչ կինեն դաշտային մկները: Մկներն ավերում են առվույտի ծաղիկները փոշոտող իշամեղուների բները: Ուրեմն, իշամեղուների թիվը կախված ե մկների և կատուների թվից: Հետևապես, ինչքան կատուներ շատ լինեն, այնքան առվույտն ավելի լավ բերք կտա, վորովհետև առանց իշամեղուների նա սերմ չի տալիս:

Նապաստակներին, կաքաֆներին և աքարներին ուտում են զանազան տեսակի փոքրիկ գիշատիչներ: Յեթե մարդ քսան տարի շարունակ չփորսար այդ կենդանիներին, բայց և միաժամանակ ձեռք չտար նրանց վոչնչացնող գիշատիչներին, այն ժամանակ նրանք ավելի քիչ կլինեյին, քան այժմ: ահա թե ինչքան շատ կենդանիներ են վոչնչացնում գիշատիչները:

Բայց ինչպես վոր վորսը կախված ե գիշատիչից, այնպես ել գիշատիչն ե կախված վորսից: Կատուների շատացումից քչանում են մկները, բայց սրանց քչացումից ել քչանում են իրենք կատուները, վորովհետև մննդի պակասությունից շատերը սովաման են լինում:

Գոյության կոփման արտահայտվում ե զանազան ձևերով: մի քանի դեպքերում ընդունում ե նա պարզապես իրար լափելու բնույթ: Գայերը լափում են վոչնչարներին, արծիվերը՝ փոքրիկ թոշուններին, թոշունները միջատներին և թրթուններին: Այսպիսի դեպքերում կոփը տեղի յեռ-

նենում կենդանական և բուսական զանազան տեսակների միջև: Սակայն կոփի կա և միևնույն տեսակի տարրեր անանհատների միջև: Այս վերջին կովում մեկը մյուսին անմիջապես չի լափում: այդտեղ սոսկալի մըցություն ե կատարվում սննդի, տեղի և հակառակ սեռի շուրջը:

Հյուսիսային Ամերիկայում, Վիրջինիայում, ապրում են միայն սև խոզեր: Սպիտակներն այստեղ չեն կարող ապրել: Յեկ դրա պատճառը այն ե, վոր վիրգինական խոզերը կերակրվում են արմատներով, վոր քանդում, հանում են իրենք խոզերը արոտատեղերում: Այդ արմատները սև խոզերի համար չափազանց ոգտակար և մննդարար են, իսկ սպիտակների համար, ընդհակառակը, խիստ վնասակար: Հասկանալի յե, վոր այդ պայմաններում սպիտակները չեն կարող մըցել սևերի հետ, դրա համար ել նրանք վոչնչանում են: Աև խոզերը գտնվում են ավելի նպաստավոր պայմաններում, քան իրենց մըցակիցները: այս հանգամանքը դյուրացնում ե նրանց գոյության կոփը և նրանք գուրս են գալիս այդ կովից հաղթանակով:

Նշանակում ե, ընությունն ինքը կատարում ե կենդանի եյակների հսկա բազմության մեջ հարմարագույների ընական ընտրությունը: Այս ընական ընտրությունը խոշոր գեր ե կատարում եյակների զարգացման գործում: Ծնորհիվ այդ ընտրության, պահպանում են իրենց գոյությունը միայն այն եյակները, վորոնք ամենից շատ են համապատասխանում կյանքի պայմաններին, իսկ այն եյակները, վորոնք չեն կարողանում հարմարվել այդ պայմաններին, զատապարտվում են վոչնչացման: Բնական ընտրությունը տեսակների զարգացման գործում չեր կարող, իհարկե, վորեկ գեր կատարել, յեթե կենդանի եյակների մեջ չառաջանային փոփոխություններ և այդ փոփոխությունները չփոխանցեյին սերունդից սեռունդ և չամրանալին հաջորդների մեջ, այսինքն, յեթե փոփոխությունները

Հմենեյին ժառանգական, Ուրիշ կերպ ասած, քնական լնտրությունն ինքն ըստ ինքյան չի ստեղծում կենդանական և բուսական նոր ձևեր. Նրա շնորհիվ ամրանում են միայն այս կամ այն պատճառով առաջացած փոփոխությունները:


4. ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Փոփոխականության արտաքին և ներքին պատճառները.—Կենդանի բարեխառնության և խոնավության ազդեցությունը.—Մնակ ազդեցությունը.—Գործարանի գործածության ու անգործության ազդեցությունը նրա փոփոխականության վրա.—Մի գործարանի ուժեղացումը է հաշիվ մի այլ գործարանի.—Ներքին զատման (սեկրեցիա) ազդեցությունը եյակի փոփոխականության վրա:

Վերևում մենք հիշատակեցինք կենդանի եյակների փոփոխականության մի շարք փաստեր: Այժմ կանգ կառնենք գլխավորապես փոփոխականության պատճառների վրա:

Կենդանիների և բույսերի փոփոխությունները կարող են առաջ գալ ինչպես արտաքին, այնպես ել ներքին, այսինքն եյակների ներսում գտնվող պատճառներից: Արտաքին ամենակարենը պատճառներից մեկը կիման է: Կենդանիների ու բույսերի վրա կատարված փորձերն ու դիտողությունները ցույց են տվել, վոր փոփոխականության վրա ահագին ազդեցություն ունեն բարեխառնությունը և խոնավությունը: Այդ տեսակետից առանձին հիշատակության արժանի յեն մանավանդ թիթեռների վրա կատարված հետազոտությունները: Հայտնի յե, վոր թիթեռների մի քանի տեսակներ ունեն յերկու սերունդ՝ ամառային և գարնանային, վորոնք տարբերվում են միմյանցից թե իրենց սեծությամբ և թե թևերի գույներով ու նաշխերով (նկ. 9): Դիտողությունները ցույց են տվել, վոր այդ փոփոխություններն առաջանում են շնորհիվ ջերմային տարբեր պայմանների, վորոնց մեջ ապրում են թիթեռների հարսնյակները: Այսպես, որինակ, յեթե ցրտի ազդեցության յենթար-

կենք այն հարսնյակները, վորոնցից պետք է զարգանան ամառային թիթեռներ, ապա կստանանք գարնանային ձևի թիթեռներ, թեվ ընդհակառակը, տաքացնելով գարնանային հարսնյակները՝ կստանանք ամառային ձևի թիթեռներ: Այս փաստերը պարզ կերպով ցույց են տալիս, վոր բարեխառնությունը վորոշ ազդեցություն է ունենում փոփոխականության վրա: Միանգամայն արհեստական ճանապարհով այս կամ այն վայրում կարելի յե ստանալ այնպիսի թիթեռներ, վորոնք մինչև այդ յերբեք չեն յեղել այդ վայրերում: Այսպես, որինակ, հյուսիսային յերկրներում ապրող յեղինջաթիթեռի հարսնյակները բարձր բա-



Նկ. 9. Vanessa levana թիթեռի գարնանային ա) յեկամառային (b) ձեղերը.

րեխառնության տակ պահելով՝ կարելի յե ստանալ այնպիսի թիթեռներ, վորոնք իրենց թևերի գույնով և ձևով զարմանալի կերպով նման կլինեն հարավային թիթեռներին: Ցեվ ընդհակառակը, հարավային թիթեռների հարսնյակները յենթարկելով ցրտի ազդեցության՝ կարելի յե ստանալ հյուսիսային թիթեռներ: Նշանակում ե, արհեստական կերպով փոփոխելով մեր ցերեկային թիթեռների հարսնյակների ջերմային պայմանները՝ կարելի յե ստանալ այնպիսի ձևեր, վորոնք կամ բոլորովին չեն լինում և կամ շատ հազվագյուտ են տվյալ վայրում:


Ամերիկայի զանազան մասերում ապրող բզեզները բերելով Զիկագո քաղաքը՝ նկատել են, վոր նրանք սկսել են

առաջ բերել այնպիսի ձևեր, վորոնք իրենց գույնով հատուկ են Չիկագոյին։ Այնուհետև այդ նոր ձևերը սկսել են արհեստականորեն պահել այնպիսի ջերմային պայմաններում, վորոնք միանդամայն համապատասխանում են Ամերիկայի այն վայրերի ջերմային պայմաններին, վորտեղից բերված են յեղել բզեզները և նրանք նորից ստացել են իրենց նախկին ձևերը։ Բզեզների գույնը կախված է նրանց մեջ գտնվող գունանյութից (պիգմենտից), վոր առաջանում ե նրանց մարմնի մի քանի գործարաններում՝ վորոշ հյութերի ազդեցության տակ։ Այդ հյութերի ազդեցությունը սերտ կախման մեջ ե գտնվում բարեխառնությունից։ Ահա թե ի՞նչու յե ազդում բարեխառնությունը այդ բզեզների գույնի վրա։

Շատ մեծ ազդեցություն ունեն կլիմայական պայմանները նաև բույսերի վրա։ Մթսոլորտային տեղումները, ցուրտը, ջերմությունը, յենթահողում գտնվող մննդարար նյութերը շատ մեծ դեր են կատարում բույսի կյանքում։ Ջրասեր կոչվող ցամաքային բույսը յերբ աճեցնում են ջրի մեջ, տալիս ե կողմնակի ճյուղեր, վորոնց տերենները խիստ կերպով կտրտված ձև են ընդունում և հարմարվում ջրային կյանքի։ Ճիշտ այդպես կակտումները ևս լույսի ազդեցության տակ փոխում են իրենց տափակ ճյուղերը և զլանաձև գառնում։ Միևնույն սերմերը, յերբ ցանում են լեռնան վրա և հովտում, տալիս են տարբեր ձևի բույսեր։

Կենդանի եյակների փոփոխականության վրա մեծ ազդեցություն ունի և սնունդը։ Մննդի ազդեցությունը կանարյան թռչունի գույնի վրա հանրածանոթ փաստ ե։ Յերբ այդ թռչունին կերակրում են կանեփի սերմերով, նրա փետուրների գույնը մգանում, իսկ յերբ կերակրում են կանյակական թռչութակին կերակրելով, նրա փետուրների գույնը մգանում, իսկ յերբ կերակրում են կանյան պղպեղով—կարմրում ե։ Բրազիլական թռչութակին կերակրելով մի քանի ձևների ճարպով, նրա փետուրը ների կանաչ գույնը կարելի յե փոխել կարմրի։

Փոփոխականության վրա ունեցած մննդի ազդեցության բնորոշ որինակ են հանդիսանում ջրալվերի սեղնային փոփոխությունները։ Այդ փոքրիկ կենդանիներն ամառվա ընթացքում տալիս են բաղմաթիվ սերունդներ։ Սրանցից նրանք, վորոնք առաջանում են ամառվա սկզբին, ունենում են կարծ գլուխ։ Այնուհետև նրանց գլուխը հետագա սերունդներում հետզհետեւ յերկարում ե. ամառվա վերջը համանում ե նա իր առավելագույն մեծության, իսկ աշնանը և ձմեռը կրկին փոքրանում ե, վորպեսզի հետեւյալ ամառվա սկզբից նորից սկսի յերկարել (նկ. 10)։ Ապա-



Նկ. 10. Ջրալվերի սկզբնային փոփոխությունները.

ցուցված ե, վոր գլխի մեծության այդ փոփոխություններն առաջանում են սմննդի ազդեցության տակ։ Ամառը, յերբ նրանք առատ սնունդ են ունենում, նրանց գլուխը մեծանում է։ Յեթե սառը ջրում ապրող ջրալվերին առատ կերակրու տանք, արհեստական կերպով կստանանք մեծացուխ ջրալվեր։

Սալամանդրի գույնը փոխվում է այն հողի գույնի ազդեցության տակ, վորի վրա ապրում ե նա։ Սև հողի վրա ապրող սալամանդրի գույնը սև է լինում, իսկ յեթե տեղափոխում են դեղին հողի վրա, նրա գույնը ևս գեղնում է։

Ինչ վերաբերում ե փոփոխականության վրա ազդող ներքին պատճառներին, ապա առաջին հերթին պետք ե ների կանաչ գույնը կարելի յե փոխել կարմրի։

հիշատակենք այստեղ այն ազդեցությունը, վոր առաջ են բերում գործածությունն ու անգործությունը գործարանների վրա։ Գործածությունից գործարանը մեծանում, ուժեղանում է, իսկ անգործությունից թուլանում, փոքրանում։ Յեղերվի վոտներն ուժեղ են, գորովհետեւա շարունակ վոտքի վրա յել լինում։ Դարբինի ձեռքերը հաստ և ուժեղ են՝ շնորհիվ շարունակական աշխատանքի։ Ծանրություններ քաշող ձիերն ուժեղ մկաններ ունեն՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ մկանները շատ հաճախ ծանրություններ քաշելու ժամանակ լարվում են։

Բայց ինչո՞ւ պետք ե ուժեղ լինեն աշխատող կենդանիները։

Պատասխանը պարզ է։ Ուժեղ աշխատանքի ժամանակ դեպի աշխատող գործարանը գնում է արյան ուժեղ հոսանք, վոր տանում ե իր հետ առատ քանակությամբ սննդանյութեր։ Յերկարատես աշխատանքի ժամանակ տեղի յել ունենում է կերակրի յերկարատես առատ մատակարարումն։ Դրա հետևանքը լինում է այն, վոր աշխատող գործարանը լավ է սնվում, վորի համար և աճում, ուժեղանում է։ Իսկ անգործությունից, գործարանը, ընդհակառակը, քանի գնում, այնքան թուլանում, փոքրանում է չիշեցեք, թե գաճի (գիպսի) մեջ բժշկելու համար (վերափաթեթ) դրած վիրավոր վոտքը կամ ձեռքը յերկարանագործությունից ինչպիսի փոփոխության ե յենթարկում։

Հաճախ մենք տեսնում ենք և փոփոխություններ, վորով մի կերպ չենք կարող բացատրել գործարանի գործածությամբ կամ անգործածությամբ։ Այդպիսի դեպքերուն պետք ե փնտրել այլ պատճառներ։ Կենդանու մարմիններկայացնում է մի ամբողջություն, վորի մեջ բոլոր գործարանները սերտ կերպով կապված են միմյանց հետ։ Սարանակի մեջ առաջացած փոփոխություններն առաջ

բերում փոփոխություններ և մյուսների մեջ։ Յեթե վազող կամ ցատկող կենդանիների յետերի վերջավորությունները յերկարում, ուժեղանում են, ապա առջևիները փոքրանում են. մի յերեւյթ, վոր պարզ կերպով տեսնում ենք մողեսների, նապաստակների և կենդուրուների վրա։ Զայլամի վոտները յերկարանալով՝ յերկարում են և նրա պարանոցն ու կտուցը։ Ստորեկըյա կենդանիների, որինակ, խլուրդի տեսողության գործարանը չափազանց թուլացել է, բայց դրա փոխարեն զարգացել են նրա հոտառության և շոշափելիքի զգայարանները։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, գործարանը զարգանում է ի հաշիվ այլ գործարանների, վորոնց հետ նա շարունակ կապված է կամ վորոնց հետ գտնվում է նա մշտական առնչության, կամ ինչպես ասում են, կորրելացիայի մեջ։ Ավելի գործունյա գործարանները իրենց աճման համար ոգտվում են ավելինվազ գործունյա գործարանների նյութերից։

Հետաքրքիր կապ ենք տեսնում մենք կատուների գույնի, լսողության և սեռի մեջ։ Կապույտ աչքերով սպիտակ կատուները միշտ խուզ են լինում։ Սպիտակ բծերով աև կամ դեղին մորթի ունեցող կատուները միշտ եգ են լինում։ Թե ինչպես պետք ե բացատրել այդ տարորինակ կապը, մենք դեռևս չգիտենք։

Այսպես կոչված ներքին զատման (սեկրեցիա) գեղձերի գործնեյության խանգարումից փոփոխվում ե ամբողջ մարմինը*։

Ամենքին հայտնի յե, ներքինու, այսինքն՝ սեռական գեղձերից (ամորձիքներից) զրկված տղամարդու տիպը։ Ներքինին փոխվում ե վոչ միայն արտաքուստ, այլ և իր ներքին կյանքով։ Ուղեղի հավելվածի նվազ զարգացումն առաջ

*) Ներքին զատման (սեկրեցիայի) գեղձեր կաշվում են այն գործարանները, վորոնք իրենց պատրաստած նյութերն ուղղակի ածում են արյան մեջ։ Այդպիսի գեղձերի կարգին են պատկանում սեռական, գահանաձե, վերնայերիկամունքային գեղձերը, ուղեղի հավելվածը եայն։

Ե բերում թղուկություն, իսկ արտակարգ զարգացումը՝ ընդհակառակը, վոսկըների և մկանների ուժեղ աճումն: Կրտած աքլարը կամ կապունը կորցնում ե իր փետուրների գեղեցիկ գույները, փարթամ պոչը և աքաղաղային ձայնը: Կրտած յերջերվի վրա յերջուրներ չեն աճում: Կրտած առյօննը զրկվում ե բաշից:

Որդանիզմի մեջ առաջացած փոփոխություններն իրենց հետևանքով կարող են լինել ոգտակար և վնասակար: Այն եյակները, վորոնց մեջ առաջանում են ոգտակար փոփոխություններ, ավելի հեշտությամբ են դիմանում գոյության կովին և պահպանում են իրենց գոյությունը. իսկ մյուսները, այսինքն նրանք, վորոնք չեն կարողանում հարմարվել իրենց միջավայրի պայմաններին, բնական ընտրությամբ դատապարտվում են վոչնչացման: Կենդանի եյակը միջավայրի պայմաններին հարմարվում ե, ինարկե, վոչ իր ցանկությամբ. դա մի ոգտակար երկույթ ե, վորտեղի յե ունենում անկախ նրա կամքից: Միջավայրին համապատասխանող գույն ունեցող թիթեռները ձեռք են բերում իրենց գույնը վոչ իրենց ցանկությամբ, կամ առաջնորդվելով վորեե նկատառումով: Թիթեռների գույնը հետևանք ե նրանց մեջ և նրանցից գուրս տեղի ունեցող ֆիզիկական և քիմիական ուժերի: Բայց և միանգամայն անվիճելի յե, վոր այդ պատահական և վոչ վորի ցանկությունից կախում չունեցող գույնը ոգտակար են նրանց համար, վորովհետեւ այդ գույնի միջոցով հարմարվում են նրանք իրենց միջավայրին և թագնվում իրենց թշնամիներից:

Դարվինի ուսմունքը կենդանի եյակների կազմությունը բացատրում է պարզ բնական որենքներով և այդպիսուն բնագիտությունից վտարում հրաշքներ գործող աստծուն:

5. ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Վո՞ր հատկություններն են փոխանցվում ժառանգներին.—Դե Ֆրիզի մուտացիայի տեսությունը.—Մուտացիայի պատճառները:

Եյակների փոփոխականությունը, ինչպես արդեն ասել ենք, տեսակների զարգացման գործում կարող ե դեր խաղալ միայն այն գեղքում, յերբ նա ամրանում ե հաջորդների մեջ, այսինքն, յերբ կենդանի եյակի մեջ առաջացած փոփոխությունները ծնողներից անցնում են զավակներին, ուրիշ կերպ ասած, յերբ դառնում են ժառանգական: Նշանակում ե, ժառանգականություն ասելով՝ մենք հասկանում ենք այն հատկությունը, վորի շնորհիվ կենդանի եյակի բնորոշ առանձնահատկությունները համառ կերպով փոխանցվում են հաջորդներին: Վոր կա իրոք այդպիսի մի հատկություն, որա մեջ վոչ վոք չի կասկածի յերբեք: Հանրածանոթ փաստ ե, վոր զավակները նմանում են իրենց ծնողներին: Վոչ վոքի մտքով յերբեք չի անցել, թե հավի ձվից կարող ե նոդկահավ զարգանալ և կամ ձիուց կարող ե կով ծնվել: Սակայն, մյուս կողմից, ամենքին հայտնի փաստ ե նաև, վոր կենդանիներն ու բույսերն իրենց ծնողների իսկական պատճենները չեն: Վոչ վոք բնության մեջ չի պեսել դեռևս յերկու եյակ, վոր իրար միանգամայն նման մենեն: Ահա այս իսկ պատճառով հարց ե առաջանում. ի՞նչպիսի առանձնահատկություններն են ժառանգարար անցնում հաջորդներին և ինչպիսները՝ վոչ: Գնացքի և կամ տրամփայի տակ վոտքը կորցրած ծնողներից ծնվում են միշտ վոտքեր ունեցող զավակները: Հազարավոր տարիներ

շարունակ հրեյաները թլպատումն են կատարում, բայց դեռ յերբեք չի յեղել մի դեպք, վոր ծնվի մի տղա յերեխա այնպիսի վիճակում, վորի վրա աստվածավախ հրեյան կարիք չզգար այլևս թլպատումն կատարելու։ Զինացի կանայք անթիվ սերուղների ընթացքում շարունակ աղավաղել են իրենց վոտքի ձևը, բայց յերբեք չի ծնվել մի չինացի աղջիկ, վոր ի ծնե ունենար աղավաղված ձևով վոտքեր։ Շատ ժողովուրդներ ողերի համար սերնդե սերուղ ծակում են յերեխաների ականջնորը, բայց յերբեք ծակված ականջներով յերեխաներ չեն ծնվել։ Գերմանացի նշանավոր կենսաբան Վայսմանը կտրել ե քսան և յերկու սերուղ իրար հաջորդող մկների պոչերը, բայց անդամահատության յենթարկված այդ մկներից ծնված 1592 մկներից և վոչ մեկի վրա չի նկատվել, վոր պոչը փոքր ինչ կարճացած լինի։ Ճիշտ այլպես՝ դարբնի զարգացած մկանները չեն փոխանցում ժառանգների մեջ։

Այս բոլորից յերեւում ե, վոր անդամահատական աղավաղումները չեն անցնում հաջորդներին։

Ժառանգաբար հաջորդներին անցնող փոփոխությունները բնության մեջ շատ ավելի սակավ են, քան այն փոփոխությունները, վորոնք ժառանգաբար չեն անցնում։ Ժառանգաբար անցնող փոփոխությունները յերեւան են դալիս հանկարծակի կերպով և կրում են թոփչքների բնույթ։ Նրանք անպայման պետք չե, վոր ոգտակար լինեն, կարող են լինել և վոչ ոգտակար և նույն իսկ վնասակար։ Այսուհետեւ ընական ընտրությունը պահպանում ե արդեն ոգտակար փոփոխություններով ոժտվածներին, իսկ մյուսներին վոչնչացնում ե։ Ժառանգաբար անցնող այդ փոփոխությունները յերեւան են դալիս վորոշ շրջաններում, վորոնք բաժանվում են միմյանցից կարծ կամ յերկար ժամանակով։ Մի շրջանից մինչև մյուսը յեղած ժամանակամիջոցում եյակները զգալի փոփոխությունների չեն յեն-

թարկվում։ Պետք ե յենթադրել, վոր այդ ժամանակաընթացքում նետղիետե տեղի յե ունենում նոր առանձնահատկությունների աննկատելի կուտակումն, վոր հասնելով մի վորոշ սահմանի՝ ծածուկ վիճակից անցնում ե գործոն վիճակի։ Հին տեսակը արդ ժամանակ կարծես թե պայթում ե՝ տալով մի շարք նոր ձևեր, վորոնք ժառանգական տեսակետից յերեւան են հանում առավել կամ պակաս չափով կայունություն։ Այդ հանկարծակի ցատկումների ձևով արտահայտվող փոփոխությունները հոլանդացի գիտնական Դե-Ֆրիզի առաջարկությամբ կոչվում են մուտացիաներ։

Վորո՞նք են այն պատճառները, վոր առաջ են բերում մուտացիաները։

Մենք արդեն վերեսում ծանոթացել ենք հանկարծակի յերեւան յեկող մի շարք փոփոխությունների հետ, վորոնք առաջանում են շնորհիվ արտաքին պայմանների փոփոխության։ Հիշենք թեկուղ թիթեռների վրա տեղի ունեցող փոձերը, վորոնց ժամանակ թիթեռների հարսնյակները յենթարկվում եյին ցածր և կամ բարձր ջերմաստիճանների ազդեցության։ Հայտնի կենսաբան Ֆիշերը «Չեկ արջ» կոչվող թիթեռը յենթարկելով ցըտի ազդեցության՝ ստացել ե խիստ մուգ գույնի թևեր ունեցող թիթեռներ, վորոնք իրենց ձեռք բերած այդ նույն առանձնահատկությունը փոխանցել են իրենց հաջորդներին։ Կոլորադյան բգեղների վրա կատարված փորձերը ևս տվել են նման հետեւանքներ։ Այս փորձերից հիշենք մեկը, վորի ժամանակ արտաքին պայմանների փոփոխության շնորհիվ հաջորդվել ե փոխել բգեղների բնախտությունը։ Մինչև այդ տարեկան յերկու սերունդ տվող բգեղները սկսել են տալ տարեկան հինգ սերունդ։ Յեկ այս նոր առանձնահատկությունը ժառանգաբար հաղորդել են նրանք իրենց հաջորդներին։ Այսպիսով արհեստական կերպով առաջացել ե մի ցեղ, վոր տա-

ըեկան տվել ե հինգ սերունդ, մի յերևույթ, վոր յերբեք չի նկատվել այդ կարգի բզեզների մեջ։ Բնախոսական նոր առանձնահատկության առաջացման նման որինակ կարելի յե բերել և բուսական աշխարհից։ Արտաքին ազդեցության միջոցով, որինակ, հաջողվել ե բազմամյա ալպիական հընձախոտից (լիոտակ) ստանալ միամյա ձեւ։

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր մուտացիաները և ժառանգաբար հաջորդներին չանցնող փոփոխությունների նման առաջանում են արտաքին պատճառների ազդեցության տակ։

6. ՄԵՆԴԵԼԻ ԶՄ

Դերիխող և ճնշված հատկություններ.—Հատկությունների ճեղումը.—Դարձութիւնների ձեւ (տվատիզմ).—Մենդելիզմի գործնական նշանակությունը.

Բարձր կարգի կենդանիների մեջ ժառանգականություն կրողներ հանդիսանում են միայն սեռական բջիջները, վորովինեաւ հենց նրանցից ե, վոր զարգանում ենոր սերնդի մարմինը։ Յուրաքանչյուր եյակ առաջանում ե իգական և արական սեռական բջիջների միացումից։ Հարց ե առաջանում—ի՞նչպիսի հատկություններ՝ մորից։ Խառնվում են արդյոք այդ հատկությունները իրար հետ և կա արդյոք նրանց փոխանցման մեջ վորևե որինականություն։ Այս հարցերի պատասխանը տալիս ե Գրեգոր Մենդելի ուսմունքը, վոր հայտնի յե մենդելիզմ անունով։

Մենդելը վերցրել ե սիսեռի յերկու ձեւ բարձր և ցածր հասակի և կազմել նրանցից խառնուրդ։ Այդ խառնուրդից ստացվել ե միայն բարձր ձեւի սերունդ։ Այնուհետև նա այս բարձր ձեւի սիսեռի սերմերը ցանել ե առանձին և առաջ բերել նրանցից խառնուրդներ։ Հետեւյալ սերնդի

մեջ ստացվել են արդեն բարձր և ցածր ձեւ սիսեռներ, բայց բարձր ձեւ սիսեռների քանակությունը մոտավորապես յերեք անգամ ավելի յե յեղել, քան ցածր ձեխնը։ Նման հետևանքներ են տվել և ուրիշ շատ բույսերի վրա կատարված փորձերը։ Ի՞նչպես բացատրել այս յերևույթը։ Ի՞նչո՞ւ բարձր և ցածր ձեւերի խառնուրդից առաջացած առաջին սերունդը բարձր ձեւ և ունենում։ Ի՞նչպես ե առաջանում այնուհետև յերկրորդ սերնդի մեջ ցածր ձեւ սիսեռ, քանի վոր խառնուրդի ժամանակ յեղել են միայն բարձր ձեւ սիսեռներ։ Ի՞նչպես բացատրել հատկությունների մեջ յերեան յեկող թվական հարաբերությունը, վոր կանոնավոր կերպով կը կավում ե բոլոր փորձերի ժամանակ։


Բայն այն ե, վոր սեռական բջիջների նյութական մասնիկները, վորոնք կրում են իրենց մեջ այս կամ այն ժառանգական հատկությունը, յերբեք չեն խառնվում մյուս սեռի բջիջների նյութի հետ։ Բեղմանավորված սեռական բջիջի մեջ գտնվում են յերկու ծնողների բոլոր հատկությունները, միայն նրանց մի մասը, ավելի ուժեղները, առաջ են անցնում և արտահայտվում արտաքուստ, իսկ մյուսները, ավելի թույլերը, մնում են թագնված և արտաքուստ աննկատելի վիճակում։ Առաջին տեսակի հատկությունը կոչվում է գերիշող։ Հաջորդ սերնդի մեջ ծնողական հատկությունների մեջ տեղի յե ունենում ճեղքումն, վորի շնորհիվ և առաջանում են հատկությունների նոր խմբավորումներ։ Ճնշված հատկություններն ազատվում են այդ ժամանակ գերիշխողներից և միանալով միմյանց հետ՝ իրենք ևս նկատելի արտահայտություն են ստանում։ Այդպիսով տեղի յե ունենում դարձ դեպի ծնողների հատկությունները։ Պարզենք այդ յերևույթը որինակով։ Առաջին սերնդի յուրաքանչյուր սիսեռի մեջ գտնվում եր յերկու հատկություն՝ բարձր և ցածր հասակի, վոր ժառանգել ե նա իր ծնողներից, բայց այդ հատկություննե-

ըեց յերկան և գալիս միայն առաջինը։ Այնուհետև նոր բեղմանավորությունից առաջանում է մի սիսեռ, վոր ժառանգում և յերկու հատկություն հորից և յերկու հատկություն ել մորից։ Այս չորս հատկությունները կարող են միանալ միմյանց հետ հետեւյալ կերպով։ Առաջին՝ մի բույսի բարձր հասակի հատկությունը կարող է միանալ յերկրորդ բույսի բարձր հասակի հատկության հետ. այսպիսի միավորությունից կառաջանա բարձր հասակի սիսեռ։ Յերկրորդ՝ մեկի բարձր հասակի հատկությունը կարող է միանալ մյուսի ցածր հասակի հատկության հետ, այսպիսի միավորությունից դարձյալ կստացվի բարձր հասակի սիսեռ, վորովհետև վերջին հատկությունը մեր որինակի մեջ գերիշխող է հանդիսանում։ Յերրորդ՝ մեկի ցածր հասակի հատկությունը կմիանա մյուսի բարձրի հետ, կրկին կառաջանա բարձր հասակի սիսեռ, դարձյալ նույն պատճառով։ Յեզ վերջապես չորրորդ՝ մեկի ցածր հասակի հատկությունը կմիանա մյուսի ցածր հասակի հատկության հետ։ Այս միավորությունից կառաջանա արդեն ցածր հասակի սիսեռ։ Ստացանք ընդամենը չորս սիսեռ, վորոնցից յերեքը բարձր հասակի, մեկը՝ ցածր հասակի։

Մենդելի ուսմունքը ստուգվել է բույսերի և կենդանիների վրա կատարված բազմաթիվ փորձերով։ և բոլոր փորձերը փայլուն կերպով հաստատել են նրա յեզրակացությունները։ Նկ. 11-ի մեջ ցույց է տրված սպիտակ և շերտավոր խխունջների խառնուրդը։ Գերիշխում են սպիտակ հատկությունը։ Առաջին սերունդը բացառապես բարեցած է սպիտակ խխունջներից։ Յերկրորդ սերնդի մետեղի յետնենում հատկությունների ճեղքումն և սպիտակ խխունջները թվով յերեք անգամ ավելի յեն, քան շերտավորները։ Յերրորդ սերնդի մեջ ճեղքումը շարունակվում է նույն որենքով։

Նման փորձեր տեղի յեն ունեցել հավերի, գորտերի

վարսակի և ուրիշ շատ կենդանիների ու բույսերի վրա։ Մենդելի ուսմունքը բացատրում է շատ յերկություներ, վորոնք մինչև այդ միանգամայն անհասկանալի ելին։ Այսպես, որինակ, զանազան տեսակի մարմական այլան-




Նկ. 11. Մոդելակ յել ճեղքալոր խխունջների պատճենիները.

դակությունները ճիշտ կերպով բացատրվում են մենդելիզմով։ Մարդու պոչուկը սովորաբար դուրս է ցցվում փոքրիկ և աննշան թմբիկի ձևով, բայց սազմի վրա նա յերկար է լինում։ Դա պարզ կերպով ցույց է տալիս, վոր մարդու նախորդներն ունեցել են պոչ։ Այդ պոչը յերբեմն մնում

ե և ծնվելուց հետո: Ի՞նչպես բացատրել այդ: Վոմանք մյան բժիշկը հետաքրքրվում է, բացի այն միջավայրից, կարծում են, վոր պոչը հանդիսանում է մի ճնշված հատ-վորի մեջ ապրում է հիվանդը, նաև նրա ժառանգակա-կություն և դրա համար ել սովորաբար դրսից չի յերևում: Առաջամբ: Այդ տեղեկությունները հնարավորություն են Սակայն հատկությունների ձեղքման ժամանակ յերբեմ տալիս բժշկին հիվանդությունն ավելի լավ ըմբռնելու, վո-ստացվում է ճնշված հատկությունների այնպիսի խմբա-վորումն, վոր միանգամայն աղատ և լինում գերիշխողից: Ահա այդ ժամանակ սեռական բջիջների մեջ գտնվող թագ-նված հատկությունը յերևան է գալիս և մարդ ծնվում է պոչով (նկ. 12):

Այդպիսի դարձ և գեղի հեռա-վոր նախնիները (ատավիզմ) և այն յերեսութը, յերբ մարդու մարմինը ամբողջովին ծածկված է լինում բըր-դով, այնպես, ինչպես այդ նկատ-վում է սաղմի վրա՝ նրա վորոշ շըր-ջանում: Այդպիսի մարդիկ կոչվում են մարդ-շներ, մարդ - առյուծներ և այլն: Այդպես ե յեղել, որինակ, ուսւ գյուղացի Աղբիան Յեվտիխիսենը (նկ. 13). Այստեղ ևս ճնշված հատ-կությունն աղատվելով գերիշխողի ներկայությունից՝ արտահայտվել է արտաքուստ: Նույնը կարելի յե ասել և մարմնական այլ այլանդակու-թյունների մասին:

Մենդելի ուսմունքն ունի խոշոր գործնական նշանակություն: Իմա-նալով ծնողների հատկությունները և հաշվի առնելով այն միջավայրը, վորի մեջ ապրում են կենդանի-ները, մենք կարող ենք ասել մոտավորապես, թե ինչուանձին արարչագործական ակտով, թե՝ վոչ:



նկ. 12. Պոչավոր տղա.



նկ. 13. Մարդ-շուն. գյուղացի Աղբիան Յեվտիխիս.

ովհետև նրանք պարզում են հիվանդի կենսաբանական առուցվածքը, վոր արտաքին զանազան ազդեցություն-ների տակ յենթարկվել ե վորոշ փոփոխությունների:

7. ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ:

Մարդը և կենդանիներն ունեն ընդհանուր ծագումն.—Մաղթաբանության կայությունը.—Թե ի՞նչ են ապացուցում այսպես կոչված սաղմային գործա-անները.—Մարդու և մարդանման կապիկների մեջ յեղած նմանությունը.—Մար-դ և կապիկները ունեցել են միենալու ընդհանուր նախահայրը:

Ի՞նչպես ե առաջացել մարդու: Բացառությունն է կազ-ում արդյոք նա կենդանական աշխարհում և ստեղծվել ե

Մարդու և կենդանիների նմանությունն այնքան մեծ է, վոր դեռևս լիննեյը, ինչպես այդ մասին հիշել ենք արդեն վերեռում, կենդանիների իր նշանավոր դասակարգության մեջ հարկադրված ե յեղել մարդուն և կապկին զետեղել միենույն շարքում, իսկ Լամարկը «ստեղծագործության պսակ» մարդուն համարել ե մազոտ շիմպանզեյի հաջորդը:

Թեպետ ազգակցությունը «ստորացնում ե» մարդկային ցեղի մի քանի ներկայացուցիչների արժանապատվությունը, ներկայացուցիչների, վորոնք պարծենում են իրենց նշանավոր ծագումով և վորոնք անջատում են իրենց վոչ միայն կապիկներից, այլ և բազմամարդ աշխատավորական շերտից, բայց դրանից գիտական ճշմարտությունը չի փոխվում։ Նախնական «բարբարոսը» շատ ավելի պարզ ե յեղել, քան աժմյան «քաղաքակրթված» բուրժուան։ Նա իր ճագումով չի հպարտացել։ Հին մարդը միամիտ կերպով հավատալով հոգեփոխության, այսինքն մարդու և կենդանիների միջև սերտ ազգակցության, շատ ավելի մոտ ե յեղել ճշմարտության, քան այսպես կոչվող քաղաքակրթված մարդը, վոր իրեն համարում ե աստծո ընտրյալ և իրեն անջատում ե մնացած կենդանական աշխարհից։

Մանրադիտակի կատարելագործումը հնարավորություն ե տվել մեզ մանրամասն ուսումնասիրել զանազան կենդանիների սաղմերի առաջացումն ու զարգացումը։ Յեվ դիտողությունները ցույց են տվել, վոր այդ սաղմերը մոր արգանդում առաջին ամիսներին այնքան նման են իրար, վոր նրանց շատ դժվար ե տարբերել միմյանցից։ Մարդկային սաղմը հերթով անցնում ե անվողնաշարավորների, ձկների, սողունների շրջանը, մինչև վոր հասնում ե խոկական մարդուն։ Մարդու սաղմի զարգացման այդ համարության մասին առաջին տեսակերպությունը կատարել է լուսական աշխարհի մասը՝ անդորրական մատնելով գործարական աշխարհի մեջ։ Այդպիսի աշխարհի մարդուն կատարել է նրանք իրենց մեջ տեղափորել են ահագին քանակությամբ կերակուր, վոր խոտակեր կենդանին ստիպված ե յեղել կլանելու։ Մարդս այժմ կերակրվում ե խորը սննդով, դրա համար ել ավելի քիչ կերակուր ե ընդունում, քան վորսի խոտակեր կենդանի։ Նրան այլևս պետք չեն այնպիսի յերկար աղիքներ, ինչպիսին ունեն խոտակերները, դրա համար ել նրանց մի մասը անդորրական մատնելով՝ գործարական աշխարհի մեջ յե յենթարկվել։ Այդպիսի աշխարհի մարդուն կատարել է նրանք մեր ականջների փոքրիկ մկան-

հասուն պտուղը ցույց ե տալիս, վոր մարդս և կենդանիներն առաջացել են միենույն նախորդներից։ Մարդկային սաղմի զարգացման շրջանները վկայում են, վոր մարդս առաջացել ե զարգացմամբ իրենից շատ ծանր գտնվող եյակներից։

Մարդկային մարմնի կազմությունը ևս ցույց ե տալիս, վոր մարդու և կենդանիների մեջ կա ազգակցական կապ։ Այսպես կոչված սաղմնային գործարանները, վորոնք այսոր գանվում են անզարգացած վիճակում և յերբեմն անզուտ ու նույն իսկ վասակար են մեզ համար, ժառանգություն են մնացել մեզ մեր հեռավոր նախորդներից։ Այդ գործարաններից մի քանիսը յերեսում են սաղմի վրա՝ նրա զարգացման առաջին ամիսներին և հետո անհետանում են (քիմուխտային ձեղքերը, աղվամազը և այլն)։ Դրանց կարգին են պատկանում նաև պաշավորությունը և մազուտթյունը (Ակ. 12 յել 13), վորոնք սովորաբար անհետանում են, բայց յերբեմն, ճիշտ ե, չափաղանց հազվագյուտ գեղքերում, մնում են նաև ամբողջ կյանքում։ Սակայն, կան և այնպիսի սաղմնային գործարաններ, վոր պահպանվում են բոլոր մարդկանց վրա։ Այդպիսի գործարաններ են, որինակ, կույր աղիքը և իր վորդանման հավելվածը։ Մեր խոտակեր նախնիների կյանքում այդ գործարանները խոշոր գեն են կատարել, նրանք իրենց մեջ տեղափորել են ահագին քանակությամբ կերակուր, վոր խոտակեր կենդանին ստիպված ե յեղել կլանելու։ Մարդս այժմ կերակրվում ե խորը սննդով, դրա համար ել ավելի քիչ կերակուր ե ընդունում, քան վորսի խոտակեր կենդանի։ Նրան այլևս պետք չեն այնպիսի յերկար աղիքներ, ինչպիսին ունեն խոտակերները, դրա համար ել նրանց մի մասը անդորրական մատնելով՝ գործարական աշխարհի մեջ յե յենթարկվել։ Այդպիսի աշխարհի մարդուն կատարել է նրանք մեր ականջների փոքրիկ մկան-

ները, վորոնք նույնպես ժառանգություն են մնացել մեզ մեր հեռավոր նախնիներից: Մարդու կենդանանման նախնիների համար այդ մկաններն անհրաժեշտ են յեղել: Շնորհիվ այդ մկանների նրանք շարժում եյին իրենց ականջները, լսում ամեն աննշան ձայները և այդպիսով զգուշանում թշնամիներից:

Սաղմնային գործարան և հանդիսանում և մազային ծածկույթը: Բոլոր կենդանիները ծածկված են մազերով: Կապիկների ամբողջ մարմինը ծածկված է մազերով, բացառությամբ դեմքի, ձեռքերի ափերի և վոտների ստորին յերեսների կամ նըբանների: Բարձր կարգի կապիկների մազերն ավելի նոսր են, քան ստորին կարգի կապիկներինը, բայց, իհարկե, մարդու համեմատությամբ նրանք դեռ բավական խիտ են: Նախնական մարդու համար մազային ծածկույթն ահազին նշանակություն ուներ, այդ ծածկույթը պաշտպանում եր նրան ցրտից և խոնավությունից. բացի գրանից, խիտ մազերի չնորհիվ նրա մարմինը հեշտությամբ չեր վիրավորվում: Մազոտ մարդիկ կան և այժմ, Մազոտությամբ առանձնապես աչքի յերնկնում այնուների ցեղը, վոր ապրում եւ Սախալին կըղզում և չյուսիսային Յապոնիայում: (Ակ. 14):


Մարդու և կենդանիների միջև յեղած ազգակցության նշան և հանդիսանում նաև տղամարդու կամ կնոջ վրա յերեմն յերեան յեկող ստիճնների ավելորդ զույգերը: Մարդու նախնիները հավանորեն ունեցել են մի քանի զույգ ստիճններ: Նրանք միանգամից ծնում և կերակրում եյին մի քանի զավակներ. նման դեպք յերեմն տեղի յեռնենում և այժմ: Յեղել են դեպքեր, յերբ կանայք ծնել են վոչ միայն յերկու կամ յերեք, այլ և չորս, հինգ և նույն իսկ վեց յերեխա միանգամից:

Այդ դիտողությունները ցույց են տալիս, վոր մարդու արմատները պիտի փնտրել կենդանական աշխարհում

և վոր մարդը ևս մնացած կենդանիների նման առաջացել է ավելի պարզ ձևերից աստիճանական զարգացման միջոցով:

Բայց ի՞նչ կենդանիներից են առաջացել, ո՞վ ենրա ամենամերձավոր նախահայրը:

Մարդու ամենամոտիկ կենդանիներն այժմ կապիկներն են: Այդ մոտիկությունն այնքան ակներեւ ե, վոր Բորնեյո կղզու վրա ապրող մալայացիներն իրենց յերկրում



Ակ. 14. Սախալին կղզու մազոտ բնակիչ.

ապրող կապիկն անվանում են որանգուտան, վոր նշանակում ե «անտառային մարդ»: Բոլոր կապիկներին սովորաբար բաժանում են յերկու խմբի՝ բարձր և ստորին: Մեզ, իհարկե, այժմ հետաքրքրում են գլխավորապես բարձրը կարգի կապիկները, վորովհետև ամենից շատ նրանք են նմանում մարդուն և դրա համար կոչվում են մարդանման կապիկներ: Մարդանման կապիկներ են որանգուտանը, շիմաղանզեն, գորիլլան և զիբրոնը (Ակ. 15):

Գիբրոնի առանձնահատկություններն են հանդիսանում

Նրա ցածր հասակը և վերին աստիճանի յերկար ձեռքերը:
Պոչ չունի նա, ինչպես չունեն և մյուս մարդանման կապիկները:

Սաղմերի վրա կատարված դիտողությունները ցույց
են տվել, վոր նրա սաղմը չափազանց նման եւ մարդու սաղմին: Նրա ձեռքերը այնքան յերկար չեն և գլուխն ու դեմքը
շատ նման են մարդկային սաղմի գլխին ու դեմքին: Մի-
այն զարգացման վերջում ձեռքերը սկսում են ավելի
արագ աճել, քան վոտները, և ուժեղ կերպով յերկարում են: Այդ նշան ե, վոր դիբբոնի նախորդներն ավելի նման են



Ակ. 15. Մարդու, գորիլայի, շնապագեյի, որանգ-ուտանի
և գիբբոնի կմախքները:

յեղել մարդուն, քան ինքը գիբբոնը: Նրանք հետզհետե հե-
տացել են մարդուց, վորովհետեւ սկսել են խիտ կուսական
անտառներում ծառերի վրա մագլցել: Շնորհիվ այդորի-
նակ կյանքի՝ նրա ձեռքերը սկսել են հետզհետե յերկա-
րել: Այդպիսով առաջացել են այժմյան գիբբոնները: Յեզ
այդ պարզ կերպով ցույց ե տալիս նրա սաղմի զարգա-
ցումը: Մրանից մենք հետևցնում ենք, վոր մարդու և ծառե-
րի վրա մագլցող մարդանման կապիկները առաջացել են
միենույն նախահորից, ճիշտ այնպես, ինչպես մի ծառից
դուրս են գալիս յերկու ճյուղ: Մարդու և կապիկների

նախահայր հանդիսացող այդ կենդանու մնացորդները գըտ-
նվել են Ասիայում: Այդ մնացորդների հիման վրա կարող
ենք մոտավոր կերպով պատկերացնել մեզ այդ կես մարդ
և կես կապիկ արարածի տեսքը: Նրա զլիի յերկարու-
թյունն ու լայնությունը յեղել են այնպես, ինչպես մար-
դունը, ճակատն ուժեղ կերպով թեքված եւ յեղել զեպի
յետ և հոնքային աղեղները զարգացած են յեղել ուժեղ
կերպով այնպես, ինչպես այդ այսոր պարզ կերպով տես-
նում ենք բարձր կարդի կապիկների վրա: Նշանակում ե,
այդ եյակի դեմքի վրա միաժամանակ յեղել են թե մար-
դու և թե կապիկ նշաններ: Մարդու այդ նախորդը կոչ-
վում ե «պիտեկանտրոպաւս», այսինքն մարդ-կապիկ:

8. ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ.

Ունի՞ արդյոք կյանքը սկեպը—Սկզբնական մառախուղային զանգվածը.—
Նյութի զարգացումը և բարգացումը.—Յերկը գոյության ուսայմանները զանա-
զան շրջաններում:—Առաջին միավորությունները յերկը վրա:—Սմինային միա-
վորություններ,—Առաջին սպիտակուցային մարմինները:—Սպիտակուցային մար-
մինների բնորոշ առանձնահատկությունները:—Առաջին կենդանի եյակը:

Մարդը և կենդանիները զարգացել են աստիճանաբար՝
պարզ ձեերից հետզհետեւ անցնելով դեպի ավելի և ավելի
բարդ ձեերին: Միաբջիջ ամեոբայից մինչև այժմյան մարդը
—ահա զարգացման այն յերկարածիք ուղին, վոր անցել են
կենդանի եյակներն ինենց գոյության ամբողջ ընթացքում:
Բայց ինչպես ե առաջացել միաբջիջ ամեոբան: Ինչպես
ե աշխար յեկել այն առաջին ամենապարզ որդանիզմը,
վոր տվել և հետապայում այնքան հարուստ և բարդ սե-
րունդ:

Տասներեսներորդ դարի կեսերին ֆրանսիացի մեծ
հետախույզ Պաստյորը մի շաբք փայլուն փորձերով ապա-
ցուցեց, վոր այժմ յերկրիս վրա կյանքի ինքնածնություն
չկա և վոչ մի վայրում: Բոլոր կենդանի եյակներն առա-

ջանում են իրենց նման եյակներից։ Նեխված նյութերի մեջ բակտերիաներ են յերևան գալիս շնորիվ այն հանգամանքի, վոր ողից ընկնում են նրանց մեջ բակտերիաների սաղմեր։ և յեթե այս կամ այն ճանապարհով սպանենք այդ սաղմերը, այն ժամանակ նեխվող նյութերի մեջ այլ ևս միկրոնկոպային եյակներ չեն լինի։

Բայց այդ դեպքում ինչպես են առաջացել այն առաջին պարզ կենդանի եյակները, վորոնցից զարգացել են այժմյան կենդանական և բուսական ձեւերը։

Յուրաքանչյուր կենդանի բջիջ վոչ այլ ինչ ե, բայց յեթե մի փոքրիկ, միկրոսկոպային աշխատանոց (լաբարատորիա), վորի մեջ տեղի յեն ունենում ամենաբարդ ֆիզիքական և քիմիական գործողություններ, վերջիններս պայմանավորվում են, ինարկե, մի կողմից բջիջը կազմող նյութի քիմիական կազմությամբ և մյուս կողմից ել արտաքին միջավայրով։ Զետ վորեւ հատկություն, վոր հատուկ լինի բացառապես կենդանի բջիջին և անկենդան մարմինները գուրկ լինեն նրանից։ Կենդանի բջիջն աչքի յե ընկնում վոչ թե իր առանձին հատկություններով, այլ սրանց բարդ խմբավորումով, վորի մեջ մտնող հատկություններից յուրաքանչյուրն առանձին վերցրած կարելի յե գտնել և անկենդան աշխարհում։ Յեթե կենդանի նյութի գոյությունը հավիտենական ե և նա չի առաջացել անկենդանից, ապա այդ դեպքում պետք ե նա անխուսափելիորեն ոժաված լիներ ուրույն առանձնահատկություններով։ մի բան, վոր մենք չենք նկատում։ Նշանակում ե, կյանքը պետք ե առաջացած լինի վորեւ ժամանակ, ուրիշ կերպ ասած, նա պետք ե մկիզը ունենա։

Այդ դեպքում ի՞նչպես պետք ե հաշտեցնենք հապալ ինքնածնության անհարինության վերաբերյալ Պաստյորի բերած անհերքելի ապացույցները կյանքի ծաղման նկատմամբ հանած մեր յեզրակացության, այսինքն ինքնածնու-

թյան հետ։ Արդյոք դրանք չեն հակասում միմյանց։

Մեր յերկրի կյանքը հաշվում են հարյուր միլիոնավոր տարիներով։ Նրա վիճակը շարունակ յենթարկվել ե փոփոխության։ Սկզբում յեղել ե նա շիկացած գաղանան մառախուղային դրության մեջ և ունեցել ե չափազանց բարձր ջերմաստիճան։ այդ ջերմաստիճանի մեջ վոչ միայն կյանք չեր կարող գոյություն ունենալ, այլ և չեյին կարող առաջանալ բարդ միացություններ։ այնուհետեւ նա յենթարկվելով բազմաթիվ փոփոխությունների՝ վերջապես հասել ե իր ներկա դրության։ Նշանակում ե, պայծառ սպիտակ աստղի վիճակից հասել ե հանգած մոլորակի վիճակին։ Ահա նրա անցած ուղին։

Յերկրի գոյության պայմանները շարունակ փոփոխվել են։ Նրա զարգացման ամենահին շրջանների պայմանները ըոլորպին նման են այժմյան պայմաններին։ Յեվ հենց այդ և պատճառը, վոր միանդամայն անհիմն կլինի մտածել, թե յեթե կյանքի բնական ինքնածնությունն անգործարանական մարմիններից այժմ անհարին ե, ապա անհնարին պիտի լիներ այդ նաև յերկրի զարգացման նախնական շրջաններում։ Յերկրի գոյության ամենահին շրջաններում յեղել են այնպիսի պայմաններ, յերբ առանձին, մեկը մյուսից անջատված մասնիկները (ատոմները) անխուսափելի կերպով պետք ե միանային իրար հետ և առաջ բերելին կենդանի որգանիզմի համար քնորոշ մի խմբավորումն։ Գտնել հեռավոր անցյալում յերկրի վրա գոյություն ունեցող այդ պայմանները, նշանակում ե ճիշտ կերպով լուծել կյանքի առաջացման հարցը։

Հարյուր միլիոնավոր տարիներ առաջ, ինչպես տեսանք քիչ վերև, մեր յերկիրը մի շիկացած գաղանան մառախուղային զանգված եր՝ սարսափելի բարձր ջերմաստիճանով, այսքան բարձր եր այդ ջերմաստիճանը, վոր մասնիկ մասնիկները չեյին կարող միանալ միմյանց հետ

և կազմել համակարգություններ։ Այդ սկզբնական մառախուղային զանգվածից հետագայում առաջանում է յերկիրն ու նրա վրայի կյանքը։

Մառախուղային զանգվածը շարունակ իրենից դեպի ըջապատող ցուրտ տիյեգերային տարածությունը ջերմային եներգիա ճառագայթելով՝ հետզհետեւ սառում է և գազանման վիճակից փոխարկվում է նաև հեղուկ և ապա ամուր վիճակի։ Տիյեգերային ձգողականության որենքի ազգեցության տակ խիտ և մանր մասնիկները ձգվում են դեպի մառախուղային զանգվածի կենտրոնը, իսկ ավելի թեթևները մնում են մակերեսությի վրա։ Սահմանվում է տարրերի դասավորության վորոշ կարգ։ Համեմատաբար ավելի ծանր զագերը կազմում են մառախուղային զանգվածի կենտրոնական միջուկը, իսկ ավելի թեթևները հավաքվում են նրա մակերեսությի վրա։

Այսուհետեւ յերկիրս եւ ավելի սառչելով՝ առաջանում են այնպիսի պայմաններ, յերբ արդեն իրարից բաժանված մի քանի տարրեր համարավորություն են ստանում՝ միանալով միմյանց հետ՝ կազմել մի համակարգություն։ Առաջին միացությունները պետք է շատ դիմացկուն լինելին՝ այդ ժամանակ դեռևս չափազանց բարձր բարեխառնության նկատմամբ, այլապես նրանք կարող ենին քայքայման յենթարկվել։ Այդպիսի դիմացկուն միացություններ են հանդիսանում կարբիդները, այսինքն ածխածնի միացությունները ծանր մետաղների հետ (թուջ և այլն)։ Յեզ կարբիդները յերկրիս վրա առաջացած առաջին միացություններն են։ Այլ միացություններ այդ ժամանակ գոյություն ունեցող պայմաններում չեյին կարող գոյություն ունենալ։

Սակայն յերկիրս շարունակում էր իրենից տաքություն առաջացնել դեպի միջմոլորակային տարածություններ, դրա համար եւ նրա բարեխառնությունը հետզհետեւ

իջնում էր։ Յերկրի մակերեսություն, վոր ցուրտ տարածության հետ անմիջական շփման մեջ էր գտնվում, ավելի շուտ և սառչում, քան միջուկը և ծածկվում ե ամուր կեղանքի։ Այդ կեղանքը բավականաչափ ամուր չեր դեռ տեղադրում նա ճաքում էր և յերկրի խորքից դուրս եյին ժայթքում թուջի և այլ կարբիդների հսկայական լավաներ և վողողում մակերեսությի վրա ընդարձակ տարածություններ։ Ժայթքման այդպիսի յերեսութներ, համեմատաբար, ինարկե, աննշան չափերով տեղի յեն ունենում և այժմ։ 1923 թվին տեղի ունեցած յափնական աղեալ մի աննշան յերեսություն էր համեմատած այն հսկայական ժայթքումների հետ, վոր տեղի յեն ունեցել յերկրի ամբողջ մակերեսությունի վրա հեռագոր անցյալում։ Մթնոլորտը, վոր շրջապատում էր յերկիրս այն ժամանակ, չնորհիվ չափազանց բարձր բարեխառնության, լցված եր խիստ կերպով տաքացած ջրային գոլորշիներով։ Այն ամբողջ ջուրը, վոր գտնվում է այժմ ովկյանուներում, ծովերում, լճերում և գետերում, այն ժամանակ գոլորշու ձևով գտնվում էր մթնոլորտում և շրջապատում էր ամբողջ յերկիրը թանձր ամպերով։ Յերկրի խորքերից դեպի մթնոլորտը դուրս ժայթքող կարբիդները շփման մեջ են մանում այդ գոլորշիների հետ և առաջ բերում այսպես կոչված ածխաջրածնիներ՝ բաղկացած ածխածնից և ջրածնից։ Ածխածնաջրածնիները հեշտ կերպով միանում են թթվածնի հետ։ Այդ միացությունները այնուհետև փոխագեցությունների մեջ են մանում ավշակի (ամոնիակի) հետ։ Ավշակի միացումը ածխածնաջրածնի հետ առաջ և բերում ամիսնային միացություն, վորոնցից հետագայում առաջանում են սպիտներ։ Սպիտները կազմում են բոլոր որգանիզմների անհրաժեշտ բաղկացուցիչ մասը։ Պրոտոպլազմայի ձևով սպիտները գտնվում են կենդանական և բուսական բջիջների մեջ և կազմում են կյանքի անհրա-

ժեշտ պայմանը: Կենդանի սպիտը մի անկայուն և հարավովոխ մարմին ե: Կենդանի սպիտային նյութերի մեջ առողմները շատ թույլ կերպով են միացած միմյանց հետ, դրա համար ել կենդանի սպիտաները հեշտությամբ քայլայվում են և առաջ բերում ավելի պարզ միացություններ: Կենդանի սպիտի քայլայման ժամանակ առաջանում ե միշտ ամինային բաղադրություն, ուստի, յեզրակացնում են,—այդ բաղադրությունն ե, վոր կազմում ե սպիտի եյական և անհրաժեշտ մասը:

Այսուհետեւ յերկիրս ել ավելի սաւելով, նրա մթնուրոտի մեջ գտնված ջրային գոլորշիները դառնում են կեթիլներ: Տեղում են հոկայական հեղեղներ, վորոնք ջրով լցնում են բոլոր գոգավորությունները, փոսերը, ճեղքվածքները: Առաջանում են ովկյանուններ, ծովեր, լճեր, գետեր: Ամինային միացություններն ել ավելի յեն բարդանում, վորովհետև նրանց հետ միանում ե ջուրը և վերջինիս մեջ լուծված վիճակում գտնվող աղերը: Առաջանում են այն բարդ միացությունները, վոր կան այժմ սպիտային մասնիկների ձեռք: Սակայն այդ առաջին կենդանի նյութը համենայն դեպս դեռ շատ պարզ եր և իհարկե նման չեր բջիջին: Պարզապես նա նյութի մի գնդիկ եր, վորընդունակ եր հեշտությամբ քայլայվելու և իրենից հեռացած մասնիկների փոխարեն միացնելու իր հետ նորանոր խմբեր և այդ ձեռք հասնելու ավելի մեծ բարդության:

Այսպիսով յերկրի զարգացումը անխուսափելի կերպով դիմում եր դեպի սպիտային միացությունների առատացումը: Յեվ զարգացման վորոշ աստիճանում յերկրի վրա անպատճառ պիտի առաջանար կայնք, ճիշտ այնպես, ինչպես առաջացել են և մյուս միացությունները: Կյանքը և յերկրը նյութի զարգացման և բարդացման արգասիքներն են: Միենույն տարերի զանազան խմբավորումներն անցնելով զարգացման յերկարածիք շղթան, առաջ են բերել կենդանի և անկենդան աշխարհների այն բազմազան ձեռքը, վոր տեսնում ենք այժմ մեր շուրջը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԵՃՈՒԹՅՈՒՆ.

Նախնական մարդը և նրա գաղափարը աշխարհի մասին.—Մարդու և կենդանիների ստեղծագործությանը վերաբերող առասպեկտի ծագումը—Միջնադարյան յեկեղեցին և մարդու ծագումը—Լիննելու տակին և կենդանիների և բույսերի դասակարգությունը—Լամարկի ուսմունքը մարդու և կենդանիների ծագման մասին:

2. ԸԳԸՑՈՒՑՑԵՐ, ՎԱՐՈՆՔ ԽՈՍՀՈՒՄ ԵՆ ՀՈԳՈՒՏ ԸՍՏԻՇՄԵՆԵՐԸ ԵՎ ԹԵՇՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Ի՞նչ ե առում առաջի ծագման զարգացման վերաբերող գիտությունը (սաղմարանությունը).—Ի՞նչ և վկայում յերկրագործին վրա հեռավոր անցյալներում ապրած եյակների բարեցած մատցորդների հանածոների վերաբերող գիտությունը՝ հներաբանությունը (պականականություն):

3. ԷՆՏՐՈՒԹՅՈՒՆ.

Բնաբության բնական և արհեստական պայմանները.—Գոյության կոմպլ:

4. ՓՈՓՈԽԵՆՈՒԹՅՈՒՆ.

Փոփոխականության արտաքին և ներքին պատճառները.—Կլիմայի բարեխառնության և խոնավության աղղեցությունը.—Մննդի աղղեցությունը—Գործարանի գործածության և անգործածության աղղեցությունը նրա փոփոխականության վրա.—Մի գործարանի ուժեղացումը ի հաշիվ մի այլ գործարանի.—Ներքին զատման (սեկրեցիա) աղղեցությունը ելուկի փոփոխականության վրա:

5. ՓԱՄԵՆԳԵԿՆՈՒԹՅՈՒՆ.

Վո՞ր հատկություններն են փոխանցվում ժառանգներին.—Դեմքի մուտացիայի տեսությունը.—Մուտացիայի պատճառները:

6. ՄԵՆՔԵԼԻ ԶՈՒՄ.

Գերիշխող և ճնշված հատկություններ.—Հատկությունների ձեղքումը.—Դարձ զեղի նախնիների ձեռ (ատալեզմ).—Մենզելեզմի գործնական նշանակությունը:

7. ՄԵՐԴՈՒ ԺԵԴՈՒՄԸ.

Մարդն ու կիսուանիներն ունեն ընդհանուր ծագութիւն.—Սաղմնաբանության վկայությունը.—Թե ի՞նչ են ապացուցանում այսպիս կոչող սաղմնային գործարանները.—Մարդու յեզ մարդանաման կապիկների մեջ յեղած նմանությունը.—Մարդը և կապիկները ունեցել են միենույն ընդհանուր նախահայրը:

8. ԿՅԱՆՔԻ ԵՐԱՇԽԱՅՄԸ ՅԵՐԿՐԻ ՎԲԸ.

Ունի՝ որդուք կյանքը սկիզբ.՝ Սկզբնական մաստիսուղային դանդաղածը.՝ նյութի զարգացումը և բարդացումը.՝ Ցերկի գոյության պարմանները զանազան ըրջաններում.՝ Առաջին միացությունները յերկրի վրա.՝ Ամենային միացումները.՝ Առաջին սպիտային ժարմինները.՝ Սպիտային մարմինների բնորոշ առանձնահատկությունները.՝ Առաջին կենդանի եյակը:

ԵՎՀԱՅՈՒԹԻՒՆ
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



«Ազգային գրադարան»



NL0262312

13014

"ССР"



И. Агол

Происхождение
человека и животных.

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С.

Москва

Никольская